

**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ԾԻԳ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ .....	3
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	6
3. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՇՐՋԱՆԱԿ .....	12
3.1. Իրավական շրջանակ .....	12
3.2. Կարգավորիչ շրջանակ .....	16
4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ .....	19
4.1. Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականություններ .....	19
4.2. Թույլտվություններ .....	21
5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ .....	23
6. ԶԳԱՅՈՒՆ ԸՆԿԱԼԻՉՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	26
7. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ .....	29
8. ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ .....	34
9. ԵՆԹԱԾՐԱԳՐԻՆ ՀԱՏՈՒԿ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ .....	35
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	37
Հավելված I: Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի ստուգաթերթիկ փոքրածավալ շինարարական կամ վերականգնման գործողությունների համար .....	37
Հավելված II: Ամսական դաշտային բնապահպանական մոնիտորինգի ստուգաթերթիկ ....	49
Հավելված III: Հանրային խորհրդակցության արձանագրություն .....	54

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲՔ	Բանկային քաղաքականություն
ԿԾԿ	Կրթական ծրագրերի կենտրոն իրականացման գրասենյակ
ՆՄՀ	Նորարարությունների մրցակցային հիմնադրամ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲՍԿԾՓ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ
ԲՍԿՊ	Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
ԿԲ Ծրագիր	Կրթության բարելավման ծրագիր
ԿԲԾ ԼՖ	Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՇՍ	Շահագործում և սպասարկում
ԳՔ	Գործառնական քաղաքականություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՀԲ	Համաշխարհային Բանկ

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը դիմել է Համաշխարհային բանկին Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման (ԿԲԾ ԼՖ) իրականացման համար, որն ուղղված է լինելու Հայաստանի տարբեր շրջաններում ընտրված դպրոցների ենթակառուցվածքների վերականգնմանն ու բարելավմանը: Ավագ դպրոցները Հայաստանում հիմնվել են 2008-2011 թվականներին: Այն ժամանակից կրթության որակը բարձրացնելու նպատակով մի շարք կառուցվածքային և բովանդակային նոր բարեփոխումներ են իրականացվել: Ավագ դպրոցներին Համաշխարհային Բանկի աջակցությունը ի սկզբանե եղել է կրթության որակի և համապատասխանելիության ծրագրի փուլերից մեկում (APL 1), այնուհետև այն շարունակվել է նույն ծրագրի երկրորդ փուլում (APL 2):

Ծրագրի գործունեությունը հիմնականում ուղղված է եղել ավագ դպրոցներում կրթության որակի բարելավմանը, միջոցների և հարմարությունների հարստացմանը: Սակայն դեռևս գոյություն ունեն մի շարք ավագ դպրոցների շենքեր, որոնք ենթակառուցվածքային բարելավումների կարիք ունեն: Քանի որ նախկինում իրականացված կրթության բարելավումների ծրագրերը իրենց մեջ ներառում էին Հայաստանի կրթական համակարգի տեխնիկական օժանդակություն և ներդրումների հետագա ամրապնդում:

Կրթության բարելավման ծրագրի զարգացման նպատակը կայանում է հետևյալում. (I) Աջակցություն նախադպրոցական ոլորտում երեխաների ընդգրկվածության աճին (II) Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ /ավագ/ աստիճանի զարգացմանը և (III) Հիմնական կրթական ինստիտուցիոնալ կազմակերպությունների կարողությունների հզորացում (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կարողությունների հզորացում և Աջակցություն գնահատման գործընթացների ամրապնդմանը): Այն կազմված է հետևյալ երեք բաղադրիչներից. (I) Նախակրթության և հանրակրթության որակի բարձրացում, (II) մրցակցային ինովացիոն հիմնադրամի ներգրավում բարձրագույն ուսումնական հաստատություններում և իրականացում և (III) Ծրագրի կառավարում, մոնիտորինգ և գնահատում: Առաջին բաղադրիչը ներառում է միջնակարգ դպրոցների համալրում, որի շրջանակներում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նախատեսում է վերականգնել չորս դպրոցներ:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Կրթական Ծրագրերի կենտոն իրականացման գրասենյակը պատասխանատու կլինի Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման իրականացման համար:

Համաձայն Համաշխարհային բանկի ԲՔ/ԳՔ 4.01 «Բնապահպանական գնահատում» քաղաքականության՝ ԿԲ Ծրագիրը դասվել է բնապահպանական Բ կատեգորիային: ԿԲԾ ԼՖ շրջանակներում ֆինանսավորվելու է հանրապետության տարբեր մասերում շինարարական և վերականգնման աշխատանքների իրականացումը:

Ոչ բոլոր ենթածրագրերն են հայտնի ԿԲԾ ԼՖ պատրաստման ժամանակ և վերջնական նախագծերն այս պահին դեռ պատրաստ չեն, թեև աշխատանքների տեսակները և դրանց բնապահպանական ազդեցություններն ընդհանուր առմամբ հայտնի են: ԿԲԾ ԼՖ պատրաստման ընթացքում բնապահպանական ստուգումը ներառել է ծրագրի բաղադրիչների համար Բնապահպանական և Սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթի (ԲՍԿՇՓ) մշակումը: ԲՍԿՇՓ-ն հանդիսանում է Կրթության բարելավման ծրագրի պատշաճ բնապահպանական մոտեցումների կիրառման ընդհանուր ուղեցույց: ԲՍԿՇՓ-ի համաձայն ցածր ռիսկայնությամբ շինարարական / վերականգնման աշխատանքների համար կմշակվեն ստուգաթերթիկի ձևաչափով Բնապահպանական և

սոցիալական կառավարման պլանները (ԲՍԿՊ)՝ հիմնական լավագույն փորձը ներկայացնող միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, ընդ որում այդ միջոցառումները և հեշտ իրականացվող են և համապատասխանում են ՀԲ անվտանգության պահանջներին:

Բացի այդ Կրթության բարելավման ծրագրի համար ընտրված դպրոցների շենքերը պետք է ստուգվեն համաձայն Հայաստանի մշակութային ժառանգության ցուցակի: Այն դեպքերում, երբ նրանցից որևիցե մեկն իրենից ներկայացնում է հատուկ պատմամշակութային արժեք, այդ դեպքում անհրաժեշտ է շենքի վերանորոգման աշխատանքները պետք է մշակել և իրականացնել ՀԲ 4.11 գործառնական քաղաքականության պահանջներին:

ԿԲԾ ԼՖ շրջանակներում վերակառուցվող բոլոր դպրոցների համար կմշակվեն ԲՍԿՊ-եր և մշակված ԲՍԿՊ-ները կներառվեն մրցութային փաթեթներում՝ առաջարկված մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացման և մոնիտորինգի ապահովման նպատակով: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում համապատասխանությունը ԲՍԿՊ-ների պահանջներին հնարավորություն կտա կանխարգելելու կամ նվազագույնի հասցնելու հնարավոր անբարենպաստ ազդեցությունները և բավարար կլինի Ծրագրի բնապահպանական ազդեցությունները թույլատրելի նվազագույն մակարդակի վրա պահելու համար:

## 2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջարկվող ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը երկու հիմնական գործառույթում. բարելավել նախակրթական և հանրակրթական ծառայությունների որակը և խթանել մասնագիտական կրթության զարգացումը Մրցունակության նորարարական հիմնադրամի միջոցով, կամ այլ զարգացնելով պիլոտային ծրագրի մակարդակից և դարձնելով ամբողջապես իրականացվող:

### **Բաղադրիչ 1: Հանրակրթության որակի բարելավում**

#### ***Ենթաբաղադրիչ 1. Աջակցություն նախադպրոցական ոլորտում ընդգրկվածության աճին***

##### *Ենթաբաղադրիչի նկարագրությունը*

Կարևորելով նախադպրոցական կրթության ոլորտի հիմնախնդիրները և համակարգում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, դեռ ՀՀ կառավարությունը 2008 թվականի մարտի 13-ի նիստի N 10 արձանագրային որոշմամբ հաստատել է “Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական և փորձնական ծրագրեր” փաստաթուղթը: Համաձայն ռազմավարական դրույթների, նախադպրոցական կրթության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական նպատակը նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է, որի նպատակով պետությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության մատչելիության ապահովման համար՝ դրանով իսկ նպաստելով կրթության մեջ նրանց ընդգրկման աճին:

Ռազմավարական ծրագրի շրջանակներում առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքային խմբի երեխաների հանրակրթությանն արդյունավետ նախապատրաստելու հիմնախնդիրը: Անհրաժեշտ է հիմնել նախակրթարաններ, որոնք հնարավորություն կստեղծվեն ապահովել ուսման հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում երեխաների ուսումը շարունակելու համար, կնպաստեն երեխայի արագ հարմարվելուն և ուսման մեջ առաջընթաց ունենալուն, ինչպես նաև կայուն հիմքեր կստեղծեն նրանց անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման և ձևավորման համար: Լրացուցիչ ֆինանսավորման արդյունքում նախատեսվում է հիմնել ևս 80 նախակրթարան:

ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 18-ի N 730-Ա որոշմամբ հաստատվել է “Հայաստանի Հանրապետության կառավարության 2012-2017 թվականների ծրագրեր”, որում ի թիվս այլ գերակայությունների, կառավարությունը շարունակում է գերակայություն տալ նախադպրոցական ոլորտի զարգացմանը: Նախադպրոցական միկրոծրագրերի իրականացումն անհրաժեշտություն է, քանի որ նախադպրոցական կրթության մատչելիության հետագա ընդլայնումը Հայաստանի Հանրապետության կառավարության առանցքային գերակայություններից մեկն է: Համակարգի մատչելիության բարձրացումը և երեխաների ընդգրկվածության մեծացումը նախատեսվում է իրականացնել ինչպես գործող նախադպրոցական հաստատությունների ծանրաբեռնվածության մեծացման հաշվին, այնպես էլ այլընտրանքային քիչ ծախսատար կրթական ծառայությունների ներդրման շնորհիվ:

##### *Հիմնական նպատակներ*

Բաղադրիչի հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- նախադպրոցական կրթության ծառայությունները և դրանց տրամադրման պայմանները համապատասխանեցնել պետական չափորոշիչներին,
- երեխաներին նախապատրաստել տարրական դպրոցին՝ ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ,
- մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը՝ ներառելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին,
- նպաստել և աջակցել երեխաների նախադպրոցական կրթության իրականացման նոր՝ քիչ ծախսատար ծառայությունների ներդրմանը, որոնք մատչելի կլինեն բնակչության առավել անապահով խավերին, ինչպես նաև կնպաստեն գործող հաստատություններում երեխաների ընդգրկման աճին,
- խթանել համայնքների նախաձեռնություններն՝ ուղղված նախադպրոցական կրթական մատչելի և շարունակական ծառայությունների մատուցմանը,
- վերապատրաստել նախադպրոցական կրթության ծրագրեր իրականացնող հաստատությունների մանկավարժներին և դաստիարակներին:

#### Ակնկալվող արդյունքներ

Ենթածրագրի հիմնական ակնկալվող արդյունքներն են.

- վերանորոգված և կահավորված նախակրթարաններ, որոնք մատուցում են մատչելի նախադպրոցական կրթության ծառայություններ,
- նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածության աճ՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ներառմամբ տարրական դպրոցին ավելի լավ նախապատրաստված 5-6 տարեկան երեխաներ,
- համայնքների և ծնողների մասնակցության աճ՝ նախադպրոցական կրթության կազմակերպման գործում,
- վերապատրաստված մանկավարժները և դաստիարակները:

**Ենթաբաղադրիչ 2.** Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը

#### Ենթաբաղադրիչի նկարագրությունը

Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: 2008 թվականին ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել “Ավագ դպրոցների ցանցի ստեղծման ռազմավարական ծրագիրը”: Այս ուղղությամբ կարևոր նախաձեռնություններից մեկն անցումն է եռամյա ավագ դպրոցին: Առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումը սկսվել է 2008 թվականին և ավարտվել 2011թվականին:

Եռամյա ավագ դպրոցի առանձնացումը թույլ է տալիս սովորողների համար ներդնել բազմաբնույթ ուսումնական ծրագրեր և առաջադեմ ուսուցման նոր հնարավորություններ, ինչպես նաև ստեղծում է ամուր հիմքեր կրթության որակի բարելավման համար: Ավագ դպրոցների նոր կազմակերպական ձևերի ու սկզբունքների ներդրումը խթանում է ավագ դպրոցում կրթության որակի աճը: Ուստի, ավելի արդյունավետ է ունենալ ավագ դպրոցների այնպիսի ցանց, որը կարող է ապահովված լինել պահանջվող ֆինանսավորմամբ, մասնագիտական կադրերով, համապատասխան ենթակառուցվածքներով, նյութատեխնիկական բազայով և տարբերակված ուսումնական հոսքերով:

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ավագ դպրոցի արդյունավետ գործունեությունը խիստ կախված է համակարգիչներով, ինտերնետով, էլեկտրոնային

ուսումնական և այլ կրթական նյութերով, ժամանակակից լաբորատորիաներով հագեցվածության հետ:

Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման այս բաղադրիչի հիմնական խնդիրներն են.

- ավագ դպրոցում կրթության որակի և արդիականության բարձրացում,
- 4 ավագ դպրոցների կարողությունների հզորացում. շենքային և ուսումնական պայմանների բարելավում,
- 4 ավագ դպրոցների վերանորոգում,
- ավագ դպրոցների նյութատեխնիկական հնարավորությունների բարելավում, անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով և գրադարանային ֆոնդով համալրում,
- ավագ դպրոցներում կրթության որակի աճ:

#### Ակնկալվող արդյունքներ

Ենթածրագրի հիմնական ակնկալվող արդյունքներն են.

- վերանորոգված և նորագույն նյութատեխնիկական բազայով համալրված ավագ դպրոցների ցանց,
- կայացած ու արդյունավետ գործող ավագ դպրոցների ցանց,
- 4 վերանորոգված ավագ դպրոց,
- ավագ դպրոցներում սովորողների ընդգրկվածության աճ,
- ավագ դպրոցի մանկավարժական կադրերի մասնագիտական որակի աճ:

**Ենթաբաղադրիչ 3.** Հիմնական կրթական ինստիտուցիոնալ կազմակերպությունների կարողությունների հզորացում (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կարողությունների հզորացում և Աջակցություն գնահատման համակարգի բարեփոխումներին)

#### Ենթաբաղադրիչի նկարագրությունը

1. ԿՏԱԿ-ը հիմնադրվել է ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 11-ի թիվ 408-Ն որոշմամբ “Կրթության որակ և համապատասխանություն” վարկային առաջին ծրագրի շրջանակներում; ԿՏԱԿ-ի գործունեության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման ու դրա շարունակականության ապահովումն է:

Մասնավորապես, ի թիվս այլ գործողությունների, ԿՏԱԿ-ի գործունեությունն ուղղված է. ա) հանրապետությունում տարվող կրթական տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների բնագավառի բոլոր ծրագրերի կոորդինացնելուն.

բ) կրթական տեղեկատվական և հաղորդակցման միջավայրի ստեղծելուն՝ համակարգչային համընդհանուր ցանցում աստիճանաբար ներառելով միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական կազմակերպությունները:

2004 թվականից մինչ այժմ ՀՀ կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման զգալի առաջընթաց է արձանագրվել: Մասնավորապես, աշակերտ/համակարգիչ հարաբերակցությունը 2004 թվականին արձանագրված 1/400-ի փոխարեն ներկայումս 1/22 է: Համակարգչային ուսումնական կենտրոններ են հիմնադրվել ՀՀ 1153 դպրոցներում: Ստեղծվել և ընդլայնվել է Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցը, որը ներկայումս, բացի ՀՀ դպրոցների շուրջ 97 տոկոսից, ներառում է նաև բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին և վերանվանվել է Հայաստանի կրթական ցանցի: Իրականացվում են



շարունակական գործողություններ էլեկտրոնային կրթական նյութերի մշակման, ուսուցիչների SCS կարողությունների զարգացման, դպրոցների վարչական և կառավարչական գործողությունների ավտոմատացման, կրթության ոլորտում տեղեկատվական հոսքերի բարելավման ուղղություններով: Ուստի ներկայումս հրատապ են դառնում ստեղծված SCS ենթակառուցվածքի և իրականացվող շարունակական գործողությունների արդյունավետ համակարգման ու կառավարման խնդիրները:

### Հիմնական նպատակներ

Այս ենթածրագրի նպատակն է բարձրացնել SCS ենթակառուցվածքի օգտագործման արդյունավետությունը կրթության բնագավառում՝ աջակցելով այս ոլորտում գործող հիմնական պետական լիազոր մարմնի՝ ԿՏԱԿ-ի կարողությունների հզորացմանը: Մասնավորապես, ենթածրագրի հիմնական նպատակներն են.

1. Աջակցել ԿՏԱԿ-ի հզորացմանը՝ որպես կրթության վիճակագրության կենտրոն;
2. Բարելավել ԿՏԱԿ-ի կարողությունները՝ Հայաստանի կրթական ցանցի տնօրինման արդյունավետության բարձրացման նպատակով;
3. Կրթության ոլորտում SCS օգտագործման մոնիտորինգի և գնահատման ուղղությամբ ԿՏԱԿ-ի կարողությունների հզորացում;
4. Կրթական հաստատություններում գոյություն ունեցող համակարգչային սարքավորումների և ծրագրային ապահովման պահպանման նպատակով տեխնիկական աջակցության մեխանիզմի հիմնում;
5. SCS գործիքների օգտագործման ոլորտում թիրախային խմբերի հմտությունների բարելավում՝ ներառյալ էլեկտրոնային նյութերի օգտագործումն ու գոյություն ունեցող տեղեկատվական համակարգերի կիրառումը:

2. Հանրակրթության բարեփոխումների շրջանակում նկատելի աշխատանք է կատարվել գնահատման ուղղությամբ: Սակայն մանկավարժական կրթության ոլորտի բարեփոխումները գտնվում են նախնական փուլում. ընթացիկ գնահատման ուղղությամբ ուսուցիչների պատրաստման գործընթացը կարելի է նկարագրել որպես թերի համակարգված, և այն դեռևս մնում է առաջնային նշանակություն ունեցող հարց:

Այս առումով Հանուն զարգացման Ռուսաստանի կրթության աջակցության (Russia Education Aid for Development – READ) ծրագրի շրջանակներում մի շարք գործողություններ են իրականացվում՝ ամրապնդելու և բարելավելու ՀՀ-ում սովորողների գնահատման համակարգի արդյունավետությունը: Մասնավորապես կմշակվեն և կներկայացվեն սովորողների ընթացիկ գնահատման ուղղությամբ վերապատրաստման ծրագրի մոդուլներ: Վերապատրաստման ծրագրի ավարտին կմշակվի ՀՀ մեկ (կամ մի քանի) բուհում վերապատրաստման ծրագրի ինստիտուցիոնալիզացման առաջարկ, որը կլինի առկա մագիստրոսական դասընթացի մի մաս, կամ որպես առանձին մագիստրոսական դասընթաց:

Բաղադրիչի շրջանակներում մասնավորապես նախատեսվում է աջակցություն սովորողների ուսուցման ձեռքբերումների ազգային գնահատման ուղղությամբ աշխատանքներին, վերոնշյալ մոդուլների ներդրում ՀՀ-ում մանկավարժական կրթություն տրամադրող բուհերում, ինչպես նաև կրթության բնագավառում մագիստրոսական ծրագրի ներդրում մեկ/երկու բուհում:

### Հիմնական նպատակներ

Ենթածրագրի հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

1. Աջակցություն սովորողների ուսուցման ձեռքբերումների ազգային գնահատմանը
2. Վերապատրաստման ծրագրի մշակված մոդուլների ներդրումը ՀՀ-ում մանկավարժական կրթություն տրամադրող բուհերից յուրաքանչյուրում
3. ՀՀ մեկ/երկու բուհերում կրթության բնագավառում մագիստրոսական ծրագրի ներդրում:

**Ենթաբաղադրիչ 4.** Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով

“Հանրակրթության մասին” ՀՀ օրենքի ընդունումից հետո ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախաձեռնեց այդ օրենքի պահանջներից բխող նոր, հանրակրթական ծրագրեր իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունների համար միասնական “Հանրակրթության պետական չափորոշիչի” նախագծի մշակումը:

2011 թվականի հուլիսի 28-ի N1088 որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվեց և ուժի մեջ մտավ ներկայումս կիրառվող “Հանրակրթության պետական չափորոշիչը”, որի պահանջների համաձայն 2011-2012 թվականներին վերանայվեցին և բեռնաթափվեցին հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչները և ծրագրերը:

Ավագ դպրոցի (10-12-րդ դասարաններ) առարկայական չափորոշիչները և ծրագրերը նույնպես վերանայման կարիք ունեն, քանի որ օրենսդրության համաձայն և մանկավարժության տեսակետից խնդիր է դրված ապահովել կրթության բովանդակության շարունակականությունը:

**Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը**

*Բաղադրիչի նկարագրությունը*

ՆՄՀ-ն դրամաշնորհային ծրագիր է, որը մշակվել է “Կրթության որակ և համապատասխանություն” վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում: ՆՄՀ-ի հայեցակարգը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 1-ին: ՆՄՀ-ի հիմնական նպատակն է բարձրագույն կրթության ոլորտում որակի, համապատասխանության, մատչելիության բարձրացումը, նորարարությունների խթանումը, ինչպես նաև կրթական և ենթակառուցվածքային կարողությունների բարելավումն ու արդիականացումը: Այս ենթածրագիրը շարունակելու է ՆՄՀ-ի իրագործումը՝ ընդլայնելով դրան մասնակցության շրջանակները ՀՀ բուհերի կողմից:

*Հիմնական նպատակներ*

Մասնավորապես, ենթածրագրի նպատակներն են.

1. Բուհերի կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացումը;
2. Բուհերի համապատասխանության և արդիականության բարձրացման խթանումը;
3. Բուհերի արդյունավետության և հավասարության խթանումը;
4. Նոր կրթական ծրագրերի հասանելիության բարձրացումը:

Այս նպատակների իրագործման համար նախատեսվում է հետևյալ հիմնական գործողությունների իրագործումը.

1. ՆՄՀ ընթացակարգերի վերամշակում;
2. Բուհերին դրամաշնորհների տրամադրում;

3. ՆԱՀ իրականացման գործընթացի մոնիտորինգ՝ ներառյալ ՆԱՀ արդյունավետության վերաբերյալ հարցումները թիրախային խմբերի շրջանում;
4. Համագործակցություն մասնավոր սեկտորի և պոտենցիալ դոնորների հետ՝ ՆԱՀ շարունակականության ապահովման նպատակով լրացուցիչ ֆինանսավորման ձեռքբերման շուրջ;
5. ԲՈՒՀ-երի վարչական և այլ աշխատակազմի ներկայացուցիչների համար վերապատրաստումների անցկացում՝ ծրագրերի ղեկավարման, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև գնումների իրականացման ընթացակարգերի ուղղությամբ:

*Ակնկալվող արդյունքներ*

Այս ենթածրագրի շրջանակներում ակնկալվող հիմնական արդյունքներն են.

1. Բարելավված մասնավոր-հանրային համագործակցություն բարձրագույն կրթության ոլորտում;
2. Բարելավված համագործակցություն բուհերի և նրանց մասնաճյուղերի միջև;
3. Բարելավված համագործակցություն պետական և ոչ պետական բուհերի միջև;
4. Ավելի արդիական և համապատասխան բարձրագույն կրթություն;
5. Բուհերի բարելավված արդյունավետություն;
6. Բուհերի ընդլայնված մատչելիություն:

### 3. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՇՐՋԱՆԱԿ

#### 3.1. Իրավական շրջանակ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածը (ընդունվել է 1995թ. և վերանայվել 2005թ.) սահմանում է, որ «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը»: Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել: Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենք (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014),
- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք (1998),
- Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենք (1998),
- ՀՀ հողային օրենսգիրք (2001),
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
- Թափոնների մասին ՀՀ օրենք (2004),
- Բնապահպանական մոնիտորինգի մասին ՀՀ օրենք (2005),
- Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005),
- ՀՀ հարկային օրենսգիրք /Բնապահպանական հարկ, բնօգտագործման վճար (2016),
- Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին ՀՀ օրենք (2008),
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
- Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք (2004),
- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենք (2013),
- Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին ՀՀ օրենք (2017),
- Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին (1979), (Վավերացված 1993):

ԿԲԾ ԼՖ առնչվող ցանկում բերված օրենքների հակիրճ նկարագրությունը ներկայացված է ստորև.

#### **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014),**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը, որն ընդունվել է 2014թ-ին, կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, այդ թվում՝ անդրսահմանային և

շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները, ինչպես նաև ներկայացնում է Հայաստանում իրականացվող տարբեր ծրագրերի և գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի հիմնական քայլերը: Օրենքի հոդված 14-ում սահմանվում են տարբեր ծրագրերի և ոլորտային զարգացման հայեցակարգերի (օր.՝ էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, շինանյութերի արդյունաբերություն, մետալուրգիա, փայտի և թղթի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն և ձկնային տնտեսություն, ջրային տնտեսություն, էլեկտրատեխնիկական արտադրություն, ենթակառուցվածք, սպասարկման ոլորտ, զբոսաշրջիկություն և հանգիստ, և այլն) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտադիր գործընթացի իրականացման հիմնական իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը սահմանում է ծանուցման, փաստաթղթերի պատրաստման, հանրային լուսման և բողոքարկման կարգը և պահանջները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը նույնպես սահմանում է հանրային լուսման և մասնակցության պահանջը: Օրենքը պահանջում է, որ ցանկացած տնտեսական գործունեության, պլանի կամ ծրագրի իրականացման համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից ստացվի դրական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային կոնվենցիաների և զարգացմանն աջակցող կազմակերպությունների (օրինակ՝ ՀԲ (WB), ԱՄՆ ՄՁԳ (USAID), ԵԽ (EU) և ՀՄԿ (MCC)) բնապահպանական գնահատման մոտեցումներին: Օրենքը կիրառելի է հետևյալ գործընթացների համար՝ շինարարություն, փոխարինում, ընդլայնում, տեխնիկական համալրում և լուծարում: Նման դեպքերում որևէ նախագծի կամ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը ենթակա «Պետական բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ից ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացությունը: Սույն օրենքը նաև ապահովում է հանրության ներգրավումն ու մասնակցությունը ՇՄԱՓ բոլոր փուլերին:

Համաձայն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ն մասին օրենքի ԿԲ Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ծրագրերը չեն պահանջում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն, քանի որ ծրագիրը ընդգրկում է միմիայն վերանորոգման (վերականգնման) աշխատանքներ (նոր շինարարություն, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական վերազինում, լուծարում վերոնշյալ ծրագրի շրջանակներում չի նախատեսվում իրականացնել): Այնուամենայնիվ եթե նախագծերը կներառեն ջեռուցման նոր համակարգերի կառուցում (ամբողջ ջեռուցման համակարգը, այլ ոչ թե առանձին վերցված ջեռուցման սարքավորումը), ապա կախված վերջինիս պարամետրերից հնարավոր է պահանջվի ՇՄԱԳ, որը անհրաժեշտ է հստակեցնել նախագծային փուլում, հիմնվելով՝ կոնկրետ նախագծային լուծումների վրա:

### **Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենքը (1998)**

Սույն օրենքն իրավական և քաղաքականության հիմքեր է ստեղծում ՀՀ տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, և կանոնակարգում է պահպանության և

օգտագործման իրավահարաբերությունները: Օրենքի 15-րդ հոդվածը նկարագրում է հուշարձանների բացահայտման և պետական գրանցման ընթացակարգերը, դրանց շուրջ պահպանական գոտիների գնահատման և պատմամշակութային արգելոցների ստեղծման ընթացակարգերը: Օրենքի 22-րդ հոդվածը պահանջում է նախքան հուշարձաններ պարունակող հողատարածքները շինարարական, գյուղատնտեսական և այլ տեսակի գործունեություն իրականացնելու համար հատկացնելը ստանալ լիազորված մարմնի հավանությունը:

Համաձայն այդ օրենքի եթե վերակառուցվոն դպրոցի շենքը ընդգրկված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված պատմության և մշակութային անշաժ հուշարձանների ցանկում, ապա պետք է ստանալ ՀՀ ԿԳՄՍ նախարարության համաձայնությունը վերոնշյալ աշխատանքներն իրականացնելու համար, իսկ այն դեպքում, երբ կատարվելու է շենքի ներսի հատվածի վերանորոգում, և եթե տվյալ շենքի ներսում չկան պատմության և մշակութային արժեք ներկայացնող սյուներ, խոյակներ ապա այդ դեպքում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից հատուկ համաձայնություն անհրաժեշտ չէ վերցնել:

### **Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը (1999թ, լրամշակվել է 2007թ.)**

Այս օրենքը կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

ԿԲ Ծրագրի շրջանակներում նախատեսվող կաթսայատների/ջեռուցման համակարգերի շահագործումը պետք է իրականացվի Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենք պահանջներին համաձայն:

### **Հողային օրենսգիրք (2001)**

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (ինչպիսիք են գյուղատնտեսությունը, քաղաքացիական շինարարությունը, արդյունաբերությունը և հանքարդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, փոխակերպումները և հաղորդակցության միջոցները, տրանսպորտը) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը: Օրենքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների կազավիճակը, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական / տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

Համաձայն Հողային Օրենսգրքի գյուղատնտեսական նշանակության հողերը պետք է օգտագործվեն միայն գյուղատնտեսական նպատակներով: Հաշվի առնելով այն հանագամանքը, որ ծրագրում ընդգրկված մի շարք դպրոցներ գտնվում են գյուղական համայնքներում և չեն ունենա թափոնների տեղադրման համար հատկացված վայրեր, ուստի պետք է խուսափել գյուղատնտեսական հողերը, որպես թափոնատեղիներ օգտագործելը:

### **ՀՀ Ընդերքի օրենսգիրքը (2011)**

Այս օրենսգիրքն, այլնի հետ մեկտեղ, սահմանում է հանքային ռեսուրսների և ստորերկրյա ջրերի օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները, ներառյալ՝ ստորերկրյա ջրային ռեսուրսների սանիտարական պահպանության գոտիները:

Համաձայն ՀՀ Ընդերքի Օրենսգրքի դպրոցների վերանորոգման համար անհրաժեշտ շինարարական նյութերը պետք է ձեռք բերվեն միայն լիցենզավորված կազմակերպություններից, կամ ծրագրի շրջանակներում հանդես եկող մատակարարները/ կազմակերպությունները պետք է ձեռք բերեն իրենց սեփական լիցենզիաները:

### **ՀՀ Ջրային օրենսգրքը (2002)**

Ջրային օրենսգրքի հիմնական նպատակն է երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների ապահովման համար իրավական հիմքերի ապահովումը:

*Համաձայն Ջրային օրենսգրքի և ոլորտին վերաբերվող այլ օրենսդրության դպրոցները պետք պայմանագրեր կնքեն ջրամատակարարող և ջրահեռացնող կազմակերպությունների հետ՝ փարածքի ջրամատակարարումն ու ջրահեռացումն ապահովելու համար:*

### **Թափոնների մասին օրենք (2004)**

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը: Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիտորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիտորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները: Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

Թափոնների մասին օրենքը վերաբերվում է վերանորոգման աշխատանքների ժամանակ առաջացող շինարարական աղբի տնօրինմանն ու կառավարմանը: Այդպիսի թափոնները տեղական/ մարզային կամ հատուկ մասնագիտացված կառույցների հետ ձեռք բերված համաձայնությունների կամ կնքված պայմանագրերի պետք է հավաքվեն և տեղափոխվեն այդ նպատակի համար նախատեսված հաստատված տարածքներ:

### **Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005)**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները, կարգերը, պայմանները, դրանց հետ կապված հարաբերությունները և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Բնապահպանական վերահսկողության մասին օրենքը սահմանում է շինարարական աշխատանքների ընթացքում պետական կառույցների ներգրավվածության դերը բնապահպանական մոնիտորինգի գործընթացում, ինչպես օրինակ ԿԲ Ծրագրի շրջանակներում դպրոցների վերանորոգման աշխատանքներում:

### 3.2. Կարգավորիչ շրջանակ

Սույն բաժնում հակիրճ ամփոփված են բնապահպանության, սակայն ոչ միայն այդ տեսանկյունից, ԿԲ ծրագրի իրականացմանը հնարավոր առնչություն ունեցող պետական մարմինների գործառույթները:

#### **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ)**

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների բնական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականությունը: ՇՄՆ-ը պատասխանատու է ՀՀ-ում բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերականգնման, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար: Այդ ոլորտներում ՇՄՆ-ի՝ որպես լիազոր մարմնի, լիազորություններն ընդգրկում են ազգային քաղաքականության մշակման վերահսկումը, բնապահպանական չափանիշների/ստանդարտների և ուղեցույցերի մշակումը և կիրառումը: Այդ գործառույթները ՇՄՆ-ն հիմնականում իրականացնում է հետևյալ ստորաբաժանումների միջոցով՝

- Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն
- Կենսառեսուրսների կառավարման վարչություն
- Ջրային ռեսուրսների կառավարման վարչություն
- Կլիմայական քաղաքականության վարչություն
- Մթնոլորտային քաղաքականության վարչություն
- Ջրային քաղաքականության վարչություն
- Անտառային քաղաքականության վարչություն
- Ռազմավարական քաղաքականության վարչություն
- Բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն
- Հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն
- Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը իրագործում է մի շարք այլ գործառույթներ՝ իր ենթակայության տակ գտնվող կառույցների միջոցով, այդ կառույցներից են.

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ, որն իրականացնում է ջրային ենթակառուցվածքների շինարարության, վերակառուցման, վերականգնման և շահագործման նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը՝ համաձայն ՀՀ օրենքների և վավերացված միջազգային համաձայնագրերի դրույթների, և տրամադրում է փորձաքննական եզրակացություն,
- Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե,
- «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ:

#### **Արտակարգ իրավիճակների նախարարություն**



Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, որի հիմնական նպատակներն են՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միասնական պետական քաղաքականության մշակումը, իրականացման համակարգումը, բնակչության տարահանման և պատսպարման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացման աշխատանքների համակարգումը, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումն ու համակարգումը, տեխնիկական անվտանգության կանոնների պահպանման ապահովումը, ՀՀ տարածքում միջազգային փրկարարական գործողություններ իրականացնող ուժերի համակարգումը, աղետների բժշկության համակարգի զարգացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովումը, հիդրոոչերևութաբանական երևույթների ռեժիմային ու հատուկ դիտարկումների, ուսումնասիրությունների և կանխատեսումների իրականացման ապահովումը, պետական նյութական պահուստի պաշարների ձևավորումը, պահպանումն ու սպասարկումը և այլ նպատակներ:

### **Տարածքային կառավարման նախարարություն**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը տարածքային կառավարման և ենթակառուցվածքների բնագավառում:

Մարզպետարանները (տարածքային կառավարման մարմինները) պատասխանատու են իրենց իրավասության տակ գտնվող տեղական նշանակության ընդհանուր օգտագործման հանրային ենթակառուցվածքների կառավարման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքները) իրականացնում են որպես համայնքի սեփականություն գրանցված տեղական նշանակության հանրային ենթակառուցվածքների կառավարումը:

### **Հայաստանի հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին**

Հայաստանի հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը պատասխանատու է աշխատանքային իրավունքների և առողջությանն առնչվող բոլոր խնդիրների համակարգման (ներառյալ աղմուկը և ցնցումները / վիբրացիան) և կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից իրականացվող սանիտարական նորմերի, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցների վերահսկողության իրականացման համար:

**Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն** իր այլ գործառույթների հետ մեկտեղ պատասխանատու է սոցիալական ապահովության, աշխատանքի և զբաղվածության, սոցիալական օժանդակության, սահմանափակ կարողություններով և ծեր մարդկանց տրամադրվող սոցիալական աջակցության, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության և այլ ոլորտներում պետական քաղաքականության, օրենսդրության և ծրագրերի մշակման և իրականացման համար:

**Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: Մշակութային ու պատմական ժառանգության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են հետևյալ երկու կառույցների կողմից՝

- **Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչությունը** իրականացնում է մշակույթի ոլորտում անօրինական ճանապարհով մշակութային արժեքների ներմուծման, արտահանման, մշակութային արժեքների սեփականության անօրինական փոխանցման կանխարգելման, պահպանության գործառույթներ, ինչպես նաև նպաստում է միջազգային մշակութային համագործակցությանը և իմֆորմացիայի փոխանակմանը:
- **Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը** իրականացնում է պատմական և մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների պահպանության, օգտագործում, վերանորոգում, վերականգնում, պետական գրանցում, փորձաքննություն և այլն:

#### 4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

##### 4.1. Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականություններ

ԿԲԾ ԼՖ կիրականացվի համաձայն Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականության երաշխիքների: Սակայն, քանի որ Համաշխարհային բանկի նոր բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը ուժի մեջ է մտել 2018 թվականից, հետևաբար պետք է ընդգրկվեն որոշ լրացուցիչ ասպեկտներ, որոնք նախորդ անվտանգության երաշխիքների քաղաքականության մաս չեն կազմում: Դրանք ներառում են, ի թիվս այլ բաների, գենդերային բռնության և աշխատանքային պայմանների հետ կապված ռիսկերի գնահատումը:

Համաշխարհային բանկի թիվ 4.01 «Բնապահպանական գնահատում» Գործառնական քաղաքականությունը դիտարկվում է որպես բանկի բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությունների համապարփակ փաստաթուղթ: Այս քաղաքականությունները կարևորվում են բնապահպանական և սոցիալական հնարավոր անբարենպաստ հետևանքների բացահայտման, նվազեցման և պատշաճ մեղմացման տեսանկյունից: Այս քաղաքականություններին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծրագրի նախապատրաստման և հաստատման ժամանակ: Համաշխարհային բանկը ստուգում է յուրաքանչյուր առաջարկված ծրագիրը՝ կիրառելի բնապահպանական գնահատման շրջանակները և տեսակը որոշելու համար, ինչպես նաև բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությունների կիրառման անհրաժեշտությունը բացահայտելու նպատակով: ԿԲԾ ԼՖ ընթացքում չեն իրականացվելու գործողություններ որոնք կարող են առաջացնել հարկադիր վերաբնակեցման, ինչը կարգավորվում է ՀԲ ՕՔ 4.12 անվտանգության քաղաքականության շրջանակներում: Համաշխարհային բանկի անձնակազմի հետ խորհրդակցելով՝ Վարկառուն պարտավոր է իրականացնել ցանկացած գնահատում, որը պահանջվում է բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականություններով: Բնապահպանական անվտանգության ապահովման քաղաքականությունները և դրանցից յուրաքանչյուրի կիրառումը հարուցող գործոնները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

Գործառնական քաղաքականություն	Գործոններ
Բնապահպանական գնահատում (ՕՔ 4.01)	Ծրագիրն իր ազդակիր տարածքում կարող է ունենալ հնարավոր (անբարենպաստ) բնապահպանական ռիսկեր և ազդեցություններ:
Անտառներ (ՕՔ 4.36)	Անտառային ոլորտի գործունեություն կամ Բանկի կողմից ֆինանսավորվող այլ միջամտություններ, որոնք կարող են զգալիորեն ազդել անտառածածկ տարածքների վրա:
Հարկադիր վերաբնակեցում (ՕՔ 4.12)	Ֆիզիկական վերաբնակեցում և հողի կորուստ, որը բերում է՝ (i) տեղահանմանը կամ բնակության վայրի կորուստին, (ii) գույքի կամ դրա մատչելիության կորուստին, (iii) եկամտի աղբյուրների կորուստին՝ անկախ ազդակիր մարդկանց վերաբնակեցնելու անհրաժեշտությունից:
Տեղաբնիկներ (ՕՔ 4.10)	Ծրագրի ազդակիր տարածքում տեղաբնիկների առկայության, դրանց վրա հնարավոր անբարենպաստ

<b>Գործառնական քաղաքականություն</b>	<b>Գործոններ</b>
	ազդեցության կամ տեղաբնիկներին որպես ծրագրի շահառուներ դիտարկելու դեպքում:
<b>Պատվարների անվտանգություն</b> (OP 4.37)	Եթե ծրագիրը ներառում է մեծ (պատվարի բարձրությունը 15մ և ավելի) կամ բարձր ռիսկայնություն ունեցող ջրամբարի կառուցում, եթե ծրագիրն առնչվում է արդեն իսկ գոյություն ունեցող կամ կառուցվող ջրամբարներին:
<b>Վնասատուների կառավարում</b> (OP 4.09)	<p>Եթե ծրագիրը ներառում է թունաքիմիկատների գնում, եթե ծրագիրը կարող է ազդել վնասատուների կառավարման վրա, այպես, որ կարող է հասցվել վնաս, նույնիսկ եթե թունաքիմիկատներ չեն ձեռք բերվելու:</p> <p>Այս քաղաքականությունը ներառում է այն ծրագրերը, որոնք կարող են. (i) բերել թունաքիմիկատների կիրառման զգալի աճին, դրանով իսկ բարձրացնելով առողջապահական և բնապահպանական ռիսկը, (ii) պահպանել կամ նպաստել վնասատուների դեմ պայքարի կիրառվող անկայուն և վնասատուների դեմ ինտեգրացված պայքարի մոտեցումներին չհամապատասխանող գործունեության տարածմանը, և/կամ ներկայացնել զգալի բնապահպանական և սոցիալական ռիսկեր:</p>
<b>Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ</b> (OP 4.11)	Քաղաքականությունը կիրառվում է այն դեպքերում, երբ ծրագիրը ներառում է, առաջին հայացքից, մշակութային արժեքներին վնաս հասցնելու ռիսկ (օրինակ՝ եթե ծրագիրը ներառում է լայնամասշտաբ հողային աշխատանքներ, հողի տեղափոխում, մակերեսի փոփոխություն կամ քանդում):
<b>Բնական բնադրավայրեր</b> (OP 4.04)	Քաղաքականությունը կիրառվում է ցանկացած ծրագրի դեպքում, երբ կարող է զգալի վնաս հասցվել բնական միջավայրին՝ ուղղակիորեն (շինարարություն) կամ անուղղակիորեն (ծրագրի իրականացմամբ պայմանավորված այլ գործունեության արդյունքում):
<b>Վիճակի տարածքներում իրականացվող ծրագրեր</b> (OP 7.60)	Քաղաքականությունը կիրառվում է այն դեպքում, երբ նախատեսվող ծրագիրն իրականացվում է «վիճելի տարածքում»:
<b>Միջազգային ջրհոսքերի վրա իրականացվող ծրագրեր</b> (OP 7.50)	Եթե ծրագիրն իրականացվում է միջազգային ջրհոսքի վրա, ինչպիսին է ցանկացած գետ, ջրանցք, լիճ, կամ այլ ջրային մարմին, որը սահման է հանդիսանում երկու պետությունների միջև, կամ մակերևութային ջրային մարմին, որը ներհոսում է մի երկրի տարածք մյուսից (կամ ցանկացած վտակ կամ այլ մակերևութային ջրային մարմին, որը հանդիսանում է միջազգային ջրհոսքի մաս), ցանկացած ծովածոց, նեղուց,

Գործառնական քաղաքականություն	Գործոններ
	ջրանցք, որը սահմանակցում է երկու և ավել պետություններին, կամ մի պետության տարածքում գտնվելու դեպքում դիտարկվում է որպես ծովը այլ պետության հետ կապող անհրաժեշտ ջրանցք, և ցանկացած գետ, որը ներհոսում է նման ջրային մարմին:

ԿԲԾ ԼՖ իրականացմանն առնչվող ՀՀ բնապահպանական օրենսդրության պահանջները ընդհանուր առմամբ համահունչ են ՀԲ քաղաքականության մոտեցումներին: Սակայն, տեղական օրենսդրության և ՀԲ քաղաքականության պահանջների միջև առկա են նաև որոշ տարբերություններ, որոնցից առավել ուշագրավները ամփոփված են ստորև: ՀՀ ՇՄԱՓ ոլորտին վերաբերող սահմանումների շարքում «Բնապահպանական գնահատում» հասկացությունը ենթադրում է ՀՀ ՇՄՆ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից ծրագիրը նախաձեռնողի ներկայացրած փաթեթի վերանայման գործընթացը՝ առաջարկվող գործունեության իրականացումը թույլատրող փարձագիտական եզրակացություն ստանալու նպատակով, մինչդեռ ՀԲ ԳՔ/ԲՔ 4.01-ի դեպքում այս հասկացությունը կիրառվում է ծրագրի նախաձեռնողի կողմից իրականացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրությունը նկարագրելու համար: Ազգային օրենսդրությունը չի տալիս ԲՍԿՊ-ի սահմանումը և չի նախատեսում դրա մշակում, սակայն պահանջում է, որ ՇՄԱՓ փաստաթուղթը ներառի բնապահպանական մեղմացնող միջոցառումների ցանկը և ներկայացնի դրանց իրականացման ընթացակարգը: Ազգային օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ՀԲ պահանջներին՝ ՇՄԱՓ փաստաթղթերի հանրային հրապարակման մասով: Այնուամենայնիվ, ՀՀ-ը հանդիսանում է Օրիուսի կոնվենցիայի կողմ, ուստի հանրային խորհրդակցությունների գործընթացն իրականացվում է Օրիուսի կոնվենցիայի ուղղորդող սկզբունքներին համահունչ: ԿԲ Ծրագիրը ընդգրկում է նաև ՀԲ ԳՔ 4.11Մշակութային ֆիզիկական ռեսուրսների պահպանությունը: Համաձայն ՀԲ ուղղորդող սկզբունքների վերոնշյալ ծրագիրը դասվում բնապահպանական Բ կատեգորիային: ԿԲԾ ԼՖ շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների համար կպահանջվի (I) բնապահպանական ստուգում՝ երաշխավորելու համար, որ յուրաքանչյուր առանձին ներդրում նույնպես պատկանում է Բ Կատեգորիային և (II) բնապահպանական և սոցիալական կառավարման պլան կոնկրետ տեղամասերի համար, ինչպես նաև բացասական ազդեցությունների մեղմացնող և կանխարգելող միջոցառումների տրամադրում և այդ միջոցառումների մոնիտորինգի մեխանիզմի ստեղծում: Դպրոցները, որոնք ընտրված են ԿԲԾ ԼՖ շրջանակներում վերանորոգման համար, պետք է ստուգվեն նաև ՀՀ մշակութային ժառանգության ցուցակներում, այն դեպքերում երբ նրանցից ինչ որ մեկը կունենա պատմական նշանակություն, ապա վերջինիս պահպանությունը պետք է իրականացվի ՀԲ ԳՔ4.11-ի:

#### 4.2. Թույլտվություններ

ԿԲԾ ԼՖ Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ թույլտվությունները՝ ներառյալ դրանց տրման համար պատասխանատու մարմինները և ստացման մոտավոր ժամկետները, ամփոփված են ստորև բերված աղյուսակում.

Թույլտվության անվանումը	Թույլտվություն տրամադրող մարմինը	Թույլտվության ստացման ժամկետը
Տեխնիկական անվտանգության և սեյսմակայունության փորձաքննություն	Պետական փորձաքննություն	Նախագծային փուլից հետո, մինչև շինարարական աշխատանքների սկիզբը
Բնապահպանական փորձաքննություն	ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն	Նախագծային փուլից հետո, մինչև շինարարական աշխատանքների սկիզբը
Շինարարության լիցենզիա	ՀՀ Քաղաքաշինության կոմիտե	Նախագծային փուլից հետո, մինչև շինարարական աշխատանքների սկիզբը (պետք է տրված լինի մրցույթին մասնակցող կապալառուներին)
Շինարարության թույլտվություն	Համապատասխան համայնքի ղեկավար	Մինչև շինարարական աշխատանքների սկիզբը
Շինարարական հրապարակի վարձակալության կամ սեփականության փաստաթղթեր	Սեփականատեր	Շինարարական հրապարակ հիմնելուց առաջ
Հանքարդյունաբերության լիցենզիա*	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Շինարարական փուլի ժամանակ
Խճի գնման դեպքում առքուվաճառքի փաստաթղթեր	Հավաստագրված վաճառող	Շինարարական փուլի ժամանակ՝ խճի գնման դեպքում
Սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվություն	ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն	Շինարարական փուլի ժամանակ
Շինարարական թափոնների տեղադրման համաձայնություն	Համապատասխան համայնքի ղեկավար	Շինարարական թափոնների տեղադրումից առաջ, աշխատանքների ավարտի սերտիֆիկատի ներկայացումից առնվազն 3 ամիս առաջ

\* Շինարարական նյութերի գնման դեպքում հանքավայր շահագործողը պետք է ունենա համապատասխան թույլտվություն:

Բոլոր վերոնշյալ թույլտվություններն առնչվում են ԿԲԾ ԼՖ իրականացմանը, սակայն նշված փաստաթղթերի մի մասը կարող է անհրաժեշտ չլինել՝ կախված աշխատանքների բնույթից և կազմակերպումից (օրինակ՝ խճի գնման դեպքում կապալառուն պարտավոր չէ

ներկայացնել հանքարդյունաբերության լիցենզիա, սակայն խիճ արտադրող ընկերությունը պետք է ունենա գործող հանքարդյունաբերության լիցենզիա):

## **5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՏՈՒԳՈՒՄ**

Բնապահպանական և սոցիալական ստուգման իրականացման հիմնական նպատակն է՝ ապահովել բնապահպանական խնդիրների պատշաճ բացահայտումը և դրանց համապատասխան լուծումների ներկայացումը: ԿԲԾ ԼՖ նախատեսված աշխատանքների մի մասը ենթադրում է շինարարություն, մինչդեռ մյուս մասը կրելու է վերականգնողական բնույթ և իրականացվելու է գոյություն ունեցող ենթակառուցվածքների վրա:

ԿԲԾ ԼՖ ֆինանսավորելու է չորս դպրոցական շենքերի շինարարությունը և վերականգնումը, և առաջացնելու է որոշակի բնապահպանական ազդեցություններ: Այսպիսով, ԿԲԾ ԼՖ հարուցում է Համաշխարհային բանկի ԳՔ/ԲՔ 4.01 «Բնապահպանական գնահատում» քաղաքականությունը: Առկա նախագծային փաստաթղթերի ուսումնասիրությունները և քննարկումները ԿԾԿ իրականացման գրասենյակի հետ ցույց տվեցին, որ դպրոցների վերականգնման աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական և անդառնալի ազդեցություններ չեն ակնկալվում: Ինչպես և ակնկալվում էր վերականգնողական աշխատանքները կունենան փոքր բնապահպանական և սոցիալական ազդեցություններ, որոնք կարելի է նվազեցնել տեղանքի բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի մշակմամբ (ամբողջական ՇՄԱԳ հաշվետվության կազմման և թույլտվությունների ձեռքբերման անհրաժեշտություն չկա):

Ընդհանուր առմամբ ԿԲԾ ԼՖ երկարաժամկետ սոցիալական և բնապահպանական ազդեցությունները կլինեն դրական, մինչդեռ շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները կլինեն փոքրածավալ և կարճաժամկետ: Հիմնվելով ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունների բնույթի վրա, բնապահպանական ստուգման արդյունքում այն դասակարգվել է որպես B կատեգորիայի ծրագիր: Բոլոր հնարավոր անբարենպաստ ազդեցությունները կարող են արդյունավետ կերպով մեղմացվել՝ ստանդարտ լավագույն բնապահպանական փորձի կիրառման միջոցով: ԲՍԿՊ-ներ կմշակվեն ԿԲԾ ԼՖ ներառված բոլոր վերականգնվող դպրոցների համար: ԲՍԿՊ-ները կանդրադառնան տվյալ տեղանքում վերականգնողական աշխատանքների իրականացման հետ կապված բնապահպանական ռիսկերին, կառաջարկեն համապատասխան մեղմացման միջոցառումներ, և կներկայացնեն մեղմացման պլանների իրականացումը վերահսկելու համար մշակված մոնիտորինգի սխեմաները: Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ ԲՍԿՊ-ների պահանջների կատարումը բավարար կլինի՝ ծրագրի բնապահպանական ազդեցությունները թուլատրելի նվազագույն մակարդակի վրա պահելու համար:

ԿԲԾ ԼՖ նաև կաջակցի “ԵՄ-ն հանուն նորարարության” ծրագրի շրջանակներում SCS-ի և գիտական լաբորատորիաների սարքավորումների տրամադրմանը մոտավորապես 200 հանրակրթական դպրոցների՝ 1.3. ենթաբաղադրիչի շրջանակներում: ԾԻԳ-ը կստուգի այս գործընթացի համապատասխանությունը, համոզվելու համար, որ ոչ մի ռադիոակտիվ կամ բարձր թունավոր նյութ չի մատակարարվի լաբորատորիաներ: Աշխատանքային նախագծերի բնապահպանական և սոցիալական կառավարումը անհրաժեշտ է իրականացնել այնպես, որ լաբորատորիաների աշխատանքի անվտանգությունը ներառվի նախագծերում, ներառյալ էլեկտրամատակարարման անվտանգությունը և օդափոխության բավարարությունը: Նախագգուշական միջոցներ կձեռնարկվեն ուսուցիչների և

աշակերտների համար անհարմարություններից խուսափելու համար, այն դեպքերում երբ ուսումնական հաստատությունում պարապմունքների ժամանակ լաբորատոր տարածքի ներսում աննշան աշխատանքներ են կատարվում:

Սեռով պայմանավորված բռնությունների (ՍՊԲ) (gender-based violence GBV) դիսկերը փոքր են՝ ելնելով նախորդ ծրագրի փորձից և ԿԲԾ ԼՖ-ի շրջանակներում նախատեսված աշխատանքների մասշտաբից: Հայաստանում չկա աշխատավայրում սեռական ոտնձգությունների վերաբերյալ օրենսդրություն, սակայն գոյություն ունի ընտանեկան բռնության մասին օրենք, որը համարվում է թերի: Չնայած ազգային օրենսդրության մեջ գենդերային անհավասարությունը կրճատելու կառավարության ջանքերին, օրենսդրության և իրականացման միջև բացը դեռևս գոյություն ունի, և գենդերային անհավասարությունը դեռևս ճանաչվում է հասարակության կողմից հանդուրժող: Սա հատկապես վերաբերում է գյուղական շրջաններին, որտեղ գենդերային անհավասարությունը պատմականորեն ավելի է արմատավորվել, ինչը դժվարացնում է գենդերային քաղաքականության բարեփոխումների իրականացումը: Այսպիսով, չնայած Հայաստանում ԿԲԾ ԼՖ հետ կապված գենդերային բռնության ցածր դիսկերին, մանրակրկիտ մոնիտորինգ կանցկացվի, որպեսզի երաշխավորվի, որ ազգային մակարդակով ավելի լայն խնդիրները չեն նպաստի ԿԲԾ ԼՖ մակարդակով գործունեությանը, որը կարող է մեծացնել գենդերային բռնության դիսկերը:

Երկիրը օժանդակ ծառայություններ է մատուցում գենդերային բռնություններ վերապարծ անձանց, այդ թվում՝ հոգեբանասոցիալական աջակցության և իրավաբանական ծառայությունների թեժ գծեր, անվտանգ տարածքների տրամադրում, ճգնաժամային իրավիճակներում ապաստարանների տրամադրում, աշխատանքի բարելավման և գենդերային բռնության դեպքերի վարման ուղղությամբ բուժաշխատողների կարողությունների ամրապնդում: Ծառայություններ մատուցողներն ու գենդերային բռնությունը վերապարծ անձինք ստանում են անհատական պաշտպանության միջոցներ, իսկ խոցելի կանայք ստանում են առաջին անհրաժեշտության հավաքածուներ՝ երկրում զարգացման գործընկերների աջակցությամբ: Կազմակերպվում են նաև վեբինարներ՝ COVID-19-ի ընթացքում գործընկերների և համայնքների մասին տեղեկացնելու համար:

Գործում է SafeYOU բջջային հավելված, որն ապահովում է առցանց մասնագիտական խորհրդատվություն կանանց և դեռահաս աղջիկների համար և նրանցից ահազանգեր է ստանում բռնության հնարավոր դեպքերի մասին: Կանանց և դեռահաս աղջիկների տարիքին համապատասխան բջջային ծրագրում ներառված են բաժիններ՝ գենդերային բռնության կանխարգելման և պաշտպանության հետ կապված հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացման համար: Այս հավելվածը մատչելի է, ներառական և հարմար ու անվտանգ երեխաների, հազարավոր կանանց ու աղջիկների համար:

Չորս միջնակարգ դպրոցներ, որոնք պետք է վերականգնվեն, կներդնեն ուսումնական ծրագիր, որոնք ներառում են գենդերային ասպեկտները հաշվի առնող միջավայրի ստեղծումը, հրապարակված դպրոցական դասագրքերի գենդերային տեսանկյունից փորձարկման իրականացումը, ներառյալ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների, հավասար հնարավորությունների, մշակված մեթոդական համալիրների, ծրագրերի, դասագրքերի հարցերը, գենդերային ասպեկտները հաշվի առնող մոտեցումների ապահովումը՝ համընդհանուր ներառման գործընթացի շրջանակներում, և կրթության, գիտության գենդերային անհավասարության հաղթահարումը, խտրականության կրճատումը:

Նախագծի մեջ կլինի բողոքների լուծման մեխանիզմ (GRM), որը կապահովի, որ շահառուները և ավելի լայն հանրությունը հնարավորություն կունենան համագործակցել



Նախագծի հետ, ծրագրի աշխատակիցներին տրամադրել գործնական առաջարկներ/կարծիքներ, որոնք թույլ կտան նրանց ավելի հաշվետու, թափանցիկ և արձագանքող լինել շահառուներին և ընդլայնել շահագրգիռ կողմերի մասնակցությունը նախագծին: Բողոքների լուծման մեխանիզմը ներառելու է գենդերային հավասարությունը հաշվի առնող ասպեկտները, որպեսզի բողոքները քննվեն և գնահատվեն գաղտնի, թափանցիկ և անկողմնակալորեն:

Աշխատուժի հետ կապված ռիսկերը կկարգավորվեն ազգային աշխատանքային օրենսգրքի և համապատասխան այլ օրենսդրական ակտերի համաձայն: Երկրում երեխաների աշխատանքի ընդունման ցածր ռիսկ կա, սակայն կան ռիսկեր, որոնք կապված են չկարգավորվող աշխատանքային ժամանակի և աշխատանքային պայմանների հետ:

ՀԲ ԳՔ 4.11 Մշակութային ֆիզիկական ռեսուրսների պահպանությունը կկիրառվի այն դեպքում, երբ ԿԲԾ ԼՖ շրջանակներում վերականգնվող հաստատություններից մի քանիսը կդիտարկվեն, որպես մշակութային ժառանգություն: Այս դեպքում հատուկ հաշվետվություն ներկայացնելու անհրաժեշտություն չի առաջանա, քանի որ ԲՍԿՊ-ում կներառվեն պոտենցիալ ռիսկերը բացահայտելու և դրանք մեղմացնելու համար հատուկ միջոցառումներ, բացի այդ ԲՍԿՊ-ում կներառվեն մշակութային ժառանգություն հանդիսացող հաստատություններում աշխատանքների իրականացման համար պահանջվող անհրաժեշտ բոլոր թույլտվությունները:

## 6. ԶԳԱՅՈՒՆ ԸՆԿԱԼԻՉՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԲԾ ԼՖ նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության չորս տարածքներում: Ծրագրային աշխատանքները կիրականացվեն գոյություն ունեցող ենթակառուցվածքի վրա:

Դպրոցների շենքերի վերանորոգումը և բարելավումը, կբերի կրթական ծառայությունների բարելավմանը, ինչը կբերի շահագործման և պահպանման ծախսերի նվազմանը: ԿԲԾ ԼՖ արդյունքում ակնկալվող ընդհանուր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները կլինեն երկարաժամկետ և կկրեն կումուլյատիվ բնույթ՝ նպաստելով ծրագրի սպասարկման տարածքում գտնվող համայնքներում սոցիալական և տնտեսական օգուտների ավելացմանը:

ԿԲԾ ԼՖ շինարարության և շահագործման փուլերում հնարավոր անբարենպաստ բնապահպանական և սոցիալական ազդեցությունները նկարագրված են ստորև: Ընդհանուր առմամբ ակնկալվում է, որ դպրոցների շենքերի շինարարական և վերականգնման աշխատանքների հետ կապված շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և տեղայնացված: Հնարավոր անբարենպաստ ազդեցությունների ճնշող մեծամասնությունը կդիտարկվի շինարարական / վերականգնման աշխատանքների իրականացման ընթացքում և տեղի կունենա աշխատանքների իրականացման միջացքում:

### Շինարարության փուլի ազդեցությունները

**Լանդշաֆտի դեգրադացիա և հողի էրոզիա:** Որոշ տարածքներ զգայուն են հողերի էրոզիայի նկատմամբ: Հետևաբար, հողային և բարեկարգման աշխատանքների ժամանակ պետք է իրականացվեն հակաէրոզիոն միջոցառումներ:

**Աղտոտում շինարարական հրապարակներից եկող հոսքերով:** Սարքավորումներից և պահեստավորված շինարարական նյութերից արտահոսքի արդյունքում նավթը, նավթամթերքները և քիմիական նյութերը կարող են ներթափանցել ստորգետնյա ջրերի մեջ կամ արտահոսել դեպի մակերևութային ջրհոսքեր:

**Կենսաբազմազանության վրա ազդեցություններ:** Կենսաբազմազանության վրա ազդեցություններ սույն ծրագրի շրջանակներում չի նախատեսվում, քանի որ վերանորոգման համար ընտրված դպրոցների շենքերը արդեն իսկ գոյություն ունեցող կառույցներ են և գտնվում են համայնքների տարածքներում, որտեղ էկոհամակարգը արդեն ձևավորված է: Միակ ազդեցությունը կենսաբազմազանության վրա ակնկալվում է հանքավայրերից շինարարական նյութերի արդյունահանման գործընթացներից:

**Աղմուկ, ցնցումներ և արտանետումներ:** Աղմուկի, ցնցումների և արտանետումների առաջացումը կապված է շինարարական նյութերի տեղափոխման և բեռնատարների տեղաշարժման հետ: Փորման-թափման աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու և բեռնատարների ու սարքավորման աշխատանքի արդյունքում այրվող վառելիքի վնասակար նյութերի արտանետումներն առաջանում են շինարարական աշխատանքների ընթացքում: Եռակցման աշխատանքները բերում են եռակցման անբարձր և մանգանի մոնօքսիդի արտանետումներին: Բետոնախառնիչների աշխատանքը հանգեցնում է բետոնի փոշու արտանետմանը:

Շինարարական աշխատանքներից առաջացած փոշին բացասական ազդեցություն են թողնում մթնոլորտի / օդի որակի վրա, և հետևաբար անհրաժեշտ է արդյունավետ միջացառումներ ձեռնարկել այդ բացասական ազդեցությունը, հատկապես բնակավայրերում և պահպանվող տարածքներում, նվազագույնի հասցնելու համար: Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքը (ընդունվել է 1994թ. և փոփոխությունների է ենթարկվել 08.05.2001թ., 01.01.2006թ. և 05.05.2007թ.) և արտանետումների արտոնագրերի, մթնոլորտը աղտոտող վտանգավոր նյութերի արտանետումների առավելագույն թույլատրելի նորմերի վերաբերյալ Կառավարության 30.03.1999թ. No 192 որոշումը առնչվում են այս խնդիրներին:

**Փորված նյութերի և շինաղբի հեռացում:** Շինարարական և վերանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ հնարավոր է շինարարական աղբի առաջացում, ինչպես նաև ասբեստ պարունակող տանիքի նյութեր, որոնք օգտագործվում էին մինչև վերջերս: Այս ազդեցությունները լինելու են տեղայնացված և կմեղմացվեն աղբի հեռացման և թափման համապատասխան գործողությունների արդյունքում, որոնք կարող են ներառել, սակայն չսահմանափակվել թափոնների ժամանակավոր կուտակման վայրերի պատշաճ ընտրությամբ, այս վայրերի սահմանների հստակ ուրվագծմամբ՝ դրանց ընդարձակումից խուսափելու նպատակով, նման վայրերից արտահոսքի կանխարգելմամբ, աղբաթափման վայրի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններից գրավոր համաձայնության ձեռքբերմամբ, թափոնները աղբաթափման վայր պատշաճ ժամանակին տեղափոխմամբ:

**Առողջության և շինարարական աշխատանքների ընթացքում անվտանգության կանոնների ոչ ճիշտ պահպանման վտանգներ:** Վտանգը կարող է առաջանալ առողջության և անվտանգության կանոնների ոչ պատշաճ իրագործման դեպքում: Լրացուցիչ վտանգ կարելի է ակնկալել այն դեպքում երբ վերանորոգման գործընթացը իրականացվի ուսումնական պրոցեսի ժամանակ և այն դեպքում, երբ վերանորոգման աշխատանքների ընթացքում դպրոցականները մուտք կունենան դպրոցի շենք:

**Ազդեցություններ պատմամշակութային և հնէաբանական հուշարձանների վրա:** Որոշակի վտանգ կարելի է ակնկալել այն դեպքում, երբ վերանորոգման համար ընտրված դպրոցները ընդգրկված լինեն պատմության և մշակութային հուշարձանների ցանկում:

## **Շահագործման փուլի ազդեցություններ**

**Շահագործման ընթացքում անվտանգության կանոնների ոչ ճիշտ պահպանման վտանգներ:** Վերականգնված դպրոցների շահագործման ընթացքում լուրջ վտանգներ չեն սպասվում, քանի դեռ պահպանվում են շահագործման և անվտանգության պատշաճ կանոնները: Շահագործման փուլի ընթացքում պետք է ապահովել պատշաճ Շ&Պ իրականացումը:

**Բնակչության վրա ազդեցությունը:** Բնակչության և զբաղվածության վրա ունեցած ազդեցությունը հիմնականում դրական է: Դպրոցների վերանորոգումը որոշակի ազդեցություն կթողնի այն վայրերի աշխատուժի ժողովրդագրական կառուցվածքի վրա, որտեղ կատարվում են ծրագրով նախատեսված բարելավումները: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա տեղական բնակչության (ինչպես կանանց, այնպես էլ

տղամարդկանց) համար ստեղծելու ժամանակավոր և մշտական աշխատատեղեր՝ շինարարական/վերականգնման աշխատանքներում զբաղվածության առաջացման արդյունքում:

Ծրագիրը կարող է վերահսկել այդ ազդեցությունները կիրառելով գենդերային ցուցանիշների ինդիկատորը: Համայնքներում ժամանակակից դպրոցների առկայությունը հնարավորություն կտա ավելի շատ մարդկանց մնալ համայնքներում (հատկապես նրանց, ովքեր ունեն դպրոցահասակ երեխաներ):

**Ազդեցություններ մատուցվող ուսումնական ծառայությունների վրա:** Դպրոցական ենթակառուցվածքների վերանորոգումը զգալիորեն կբարելավի շենքային պայմանների բարելավումը: Դպրոցների վերանորոգումը թույլ կտա նաև իրականացնել ուսումնական գործընթացները առանց ենթակառուցվածքի խափանման խնդիրների (օրինակ ջեռուցման համակարգի խափանման խնդրի պատճառով):

**Կենցաղային թափոնների և կեղտաջրերի առաջացում:** Դպրոցների գործունեությունը կբերի կենցաղային թափոնների և կեղտաջրերի առաջացմանը, որոնց սխալ և ոչ ժամանակին հեռացումը տարածքից կարող է բերել տհաճ հոտի և էսթետիկական ազդեցության, ինչպես դպրոցի այնպես նրա հարակից տարածքների համար: Այլ անբարենպաստ ազդեցություններ կարող են առաջանալ նաև դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների վատացման հետևանքով, որը կարող է առաջանալ թափոնների կուտակման և կոյուղատարերի խցանման հետևանքով:

**Ջեռուցման համակարգի շահագործում:** Ջեռուցման համակարգերի անսարքությունը տարվա ցուրտ եղանակներին կարող է բերել ուսումնական գործընթացի խափանմանը, ինչպես նաև համակարգի սխալ շահագործումը կարող է առաջացնել մթնոլորտային օդի աղտոտում:

## 7. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ

Մեղմացման միջոցառումները, որոնք կարող են կիրառվել համապատասխան վայրերում (կախված ենթակառուցվածքի տեսակից, աշխատանքների ծավալից ու տեսակից, շրջակա տեղանքից և այլն), առանձին-առանձին սահմանված են նախագծման, շինարարության և շահագործման փուլերի համար: Համապատասխան միջոցառումները կներառվեն ԲՍԿՊ փաստաթղթերում:

### Նախագծման փուլ

Բնապահպանական և սոցիալական մեղմացման պահանջները պետք է ներառվեն վերջնական նախագծերում, տեխնիկական մասնագրերում և մրցությային փաստաթղթերում, որոնք պետք է իրականացվեն կապալառու(ներ)ի և համակարգը շահագործող ընկերության կողմից՝ հնարավոր ազդեցություններից խուսափելու, դրանք կանխարգելելու, նվազեցնելու նպատակով: Վերջնական նախագծի փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի առաջարկվող հանքերի և թափոնների տեղադրման վայրերի ցուցակը; ջրային ռեսուրսները, հանքերը, ավելցուկային գրունտի տեղադրման վայրերն օգտագործելու համար համապատասխան պետական և տեղական իշխանությունների կողմից տրված թույլտվությունները և համաձայնությունները; շինարարության նախապատրաստման առաջարկվող վայրերի (ինչպիսիք են մոտեցնող ճանապարհները, շինարարական ճամբարները, բեռնարարների և սարքավորման կայանման վայրերը, պահեստները և այլն) ցուցակը: Վերջնական նախագծային փաստաթղթերը պետք է ներառեն բնական ռեսուրսների վրա նվազագույն ազդեցություն ունեցող տեխնիկական լուծումները: Պետք է ապահովել, որ շինարարական տեխնիկայից և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող ժամանակավոր աղմուկը բացասական ազդեցություն չի ունենա հարակից համայնքների բնակչության վրա: Առավել ուշադրություն պետք է դարձնել այնպիսի կառույցների վրա, որոնք վնասված են և սեյսմին տեսանկյունից գտնվում են անբարենպաստ վիճակում, այդպիսի կառույցների ամրացման համար պետք է ներկայացնել կոնկրետ միջոցառումներ: Վերջնական նախագծում հատուկ ուշադրություն պետք դարձնել այն դպրոցական շենքերին, որոնք ընգրկված կլինեն պատմության և մշակութային ժառանգության ցուցակում (համապատասխան թույլտվությունների ցանկը ներկայացված է այս փաստաթղթի 4.3 ենթաբաժնում):

### Շինարարության փուլ

**Լանդշաֆտների պահպանում և հողի էրոզիայի նվազեցում:** Լանդշաֆտների դեգրադացիան և հողերի էրոզիան նվազեցնելու նպատակով Կապալառու(ներ) շինարարական նյութերի ձեռքբերման համար հնարավորության դեպքում պետք է օգտագործեն գոյություն ունեցող հանքավայրեր: Առաջնահերթորեն կարելի է օգտագործել անդված հողային զանգվածները դրանով սահմանափակելով հին և նոր հանքավայրերի անհրաժեշտությունը: Թույլտվություն տվող համապատասխան պետական կառույցներից, ինչպես նաև ըստ անհրաժեշտություն տեղական կամ մարզային իշխանություններից ձեռք կբերվեն համապատասխան համաձայնություններ հանքավայրերի բացման կամ օգտագործման համար: Կկատարվի մոտեցնող ճանապարհների ընտրությունը այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի լանդշաֆտի և հողերի էրոզիայի վրա ազդեցությունները, ինչպես նաև պետք է կատարվի մոտեցնող ճանապարհների վերահսկողություն՝ խուսափելու համար վերջիններիս անհարկի ընդլայնումից:

**Շինարարական հոսքերի կառավարում:** Հնարավորության դեպքում պետք է օգտագործվեն գոյություն ունեցող մոտեցնող ճանապարհները, խուսափելով նոր ճանապարհների ստեղծումից: Կիրականացվի շինարարական հրապարակների և մոտեցնող ճանապարհների վերին մակերևույթների տոփանում՝ տարածքը ջրային հոսքերից և հեղեղումներից զերծ պահելու համար: Այն կարող է պահանջել դրենաժային առունների փորում կամ միացում գոյություն ունեցող բնական դրենաժային համակարգերին/անձրևաջրերի հեռացման համակարգերին (օրինակ՝ եթե այն առկա է մոտակա ճանապարհի կողքին): Նավթամթերքների և քսայուղերի պահեստները պատշաճ կահավորված կլինեն, նվազագույնի հասցնելու համար հողի և ջրի աղտոտման ռիսկերը: Շինարարական ճամբարներում տեղադրված սեպտիկ հորերը պետք է պատրաստված լինեն անջրթափանց նյութից և պետք է դատարկվեն համաձայն գործող կանոնների: Կեղտաջրերը՝ նախագծման փուլում տեղական ինքնակառավարման մարմինների հետ կնքված պայմանագրի համաձայն հատուկ մեքենայի միջոցով կտեղափոխվեն կենտրոնացված կոյուղաջրերի կոլեկտոր:

**Կենսաբազմազանության պահպանում:** Ազդեցությունը կենսաբազմազանության վրա կլինի նվազագույն, քանի որ շինարարական աշխատանքներն իրականացվելու են գոյություն ունեցող կառույցներում: Ինչպես արդեն ներկայացվել էր կխրախուսվի շինարարական նյութերի ձեռք բերումը գոյություն ունեցող հանքավայրերից, նվազագույնի հասցնելով նոր հանքավայրերի շահագործման հետևանքով լանդշաֆտների և կենսաբազմազանության վրա բացասական ազդեցությունները:

**Աղմուկի, վիբրացիայի և արտանետումների կառավարում:** Շինարարական հրապարակներում և մոտեցնող ճանապարհներին փոշու ազդեցությունը կանխարգելելու նպատակով կիրականացվի տարածքների պարբերաբար ջրցանում: Շինարարական աշխատանքների ընթացքում մեքենաների ծխազագային արտանետումների և փորման/քանդման աշխատանքների հետևանքով կմեծանա օդի աղտոտվածությունը: Շինարարական աշխատանքների ընթացքում պարբերաբար ջրցանումը կնվազեցնի փոշու ազդեցությունը: Շինարարական հրապարակներից փոշու և աղմուկի ազդեցությունները նվազեցնելու համար շինարարական նյութերի և թափոնների տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով: Մոտակա համայնքների բնակիչների վրա աղմուկի ազդեցությունը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքներում ներգրավված մեքենաներն ու սարքավորումները կահավորված կլինեն համապատասխան խլացուցիչներով, ինչպես նաև դրանք կշահագործվեն տեխնիկական նորմալ վիճակում: Վերանորոգման աշխատանքները կիրականացվեն օրվա ցերեկային ժամերին:

**Թափոնների կառավարում:** Եթե բուսական ծածկով տարածքը նախատեսվում է օգտագործել, որպես շինարարական հրապարակ, այդ դեպքում հողի բերրի շերտը պետք է հանվի և պահվի 1մ չգերազանցող կույտերում և այն պետք է օգտագործվի բարեկարգման աշխատանքների ժամանակ: Շինարարական աղբը և բետոնի մնացորդները կտեղափոխվեն և կտեղադրվեն հաստատված վայրերում: Շինարարական թափոնների և քանդված նյութերի տեղափոխման/տեղադրման համար պետք է ստանալ տեղական կամ համայնքային իշխանությունների համաձայնությունը/թույլտվությունը կամ կնքել համապատասխան պայմանագրի հատուկ մասնագիտացված կազմակերպություն հետ, վերոնշյալ աշխատանքները կատարելու համար: Վերանորոգման աշխատանքների ավարտից հետո կկատարվի լանդշաֆտի և օգտագործված հանքավայրերի վերականգնում:

**Անվտանգության կառավարում:** Վերանորոգման աշխատանքների ընթացքում ոչ մի լուրջ վտանգ չի սպավում քանի դեռ կիրավում են շինարարական աշխատանքների անվտանգության ընթացակարգերը: Դպրոցների վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել ամռան ամիսներին (ոչ ուսումնական շրջանում), այդ կերպ նվազագույնի հասցնելով երեխաների մասնակցությամբ վթարները, ինչպես նաև չխոչընդոտել ուսումնական գործընթացին: Այն դեպքերում, երբ վերանորոգման աշխատանքները պետք է իրականացնել ուսումնական գործընթացին զուգահեռ, ապա հնարավորության դեպքում պետք է դիտարկվի ուսումնական գործընթացը ժամանակավորապես հարևան դպրոց տեղափոխությունը: Եթե վերոնշյալի իրականացումն անհնար է, ապա դպրոցի վերանորոգման աշխատանքները պետք սահմափակվի (օրինակ դպրոցի առաջին հարկում իրականացվի վերանորոգում, իսկ երկրորդ հարկում ուսումնական գործընթացը), վերանորոգվող հատվածում պետք է բացառել դպրոցականների մուտքը: Անհատական պաշտպանիչ միջոցներ կկիրառվեն վերանորոգման աշխատանքների ընթացքում: Այն դեպքերում, երբ կկատարվեն ասբեստե տանիքների քանդում, այդ դեպքում աշխատանքները կիրականացվեն հատուկ վերապատրաստված մասնագետների կողմից՝ հատուկ պաշտպանիչ սարքավորումների, հանդերձանքի կիրառմամբ:

Նախազգուշական միջոցներ կձեռնարկվեն, որպեսզի խուսափեն մարդկանց առողջությանը և անվտանգությանը սպառնացող վտանգներից, եթե ուսումնական շենքի մնացած հատվածում պարապմունքների ժամանակ լաբորատոր շինությունների ներսում աննշան աշխատանքներ իրականացվեն: Նախազգուշական միջոցները ներառում են հետևյալը.

- Ուսուցիչները և աշակերտները համապատասխան ծանուցման միջոցով տեղեկացվել են աշխատանքների մասին;
- Կապալառուն պաշտոնապես համաձայնում է, որ բոլոր աշխատանքները կկատարվեն անվտանգ և կարգապահ ձևով՝ ապահովելով բնակչության և շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցության ;
- Լաբորատոր տարածքների ներսում աշխատանքների ընթացքում բոլոր հարակից գրասենյակների անվտանգ և շարունակական հասանելիության ապահովում;
- Աշխատանքային հարթակները նշված են ժապավենի միջոցով և կազմակերպվում են այնպես, որ տեղում շինանյութերը և թափոնները չխանգարեն մուտք գործել և ոչ մի վտանգ չներկայացնեն մարդկանց համար;
- Շինարարական թափոնների արագ հեռացման միջոցառումներ աշխատանքների ավարտից և դրանց վերամշակումից հետո՝ պաշտոնապես նշված աղբավայրեր/ թաղման վայրեր;
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները համապատասխանում են միջազգային առաջադեմ պրակտիկային:

**Պատմական և/կամ մշակութային հուշարձանների պաշտպանություն:** Ծրագրի շրջանակներում վերանորոգման համար ընտրված դպրոցների շենքերը եթե առկա են ՀՀ պատմական և մշակութային հուշարձանների հաստատված ցուցակում՝ այն դեպքում երբ պետք է կատարվեն արտաքին վերանորոգման աշխատանքներ ապա պետք է ստանալ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հատուկ թույլտվությունը, իսկ այն դեպքերում, երբ վերանորոգման աշխատանքները պետք է իրականացվեն շենքի ներսում և իրենցից չեն ներկայացնում պատմական և/կամ մշակութային արժեք ներկայացնող սյունների և տարրերի վերանորոգում, ապա այդ դեպքում հատուկ թույլտվություն անհրաժեշտ չէ:

**Կենցաղային աղբի և կեղտաջրերի կառավարում:** Աղբի հավաքման տարրաներ կտեղադրվեն վերանորոգվող դպրոցների հարակից տարածքներում, որը նախատեսված կլինի դպրոցների վերանորոգման ընթացքում կենցաղային աղբի հավաքման համար: Տարածքից աղբի ժամանակին տեղափոխման և տեղադրման համար համաձայնագիր/պայմանագիր կկնքվի համապատասխան պետական մարմնի կամ կազմակերպության հետ: Կոյուղաջրերը կթափվեն կոյուղու կենտրոնացված համակարգ: Այն դեպքերում, երբ համայնքում բացակայում է կոյուղու կենտրոնացված համակարգը դպրոցի կոյուղացված ջրերը պետք է հավաքվեն հատուկ տարողության մեջ և պարբերաբար հեռացվեն մոտակա կոյուղու կենտրոնացված համակարգ հատուկ մասնագիտացված կազմակերպությունների միջոցով:

Վերանորոգման աշխատանքների բացասական հետևանքները նվազեցնելու նպատակով, պետք է այդ աշխատանքները համաձայնեցվեն դպրոցի ղեկավարության և համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների հետ

### **Շահագործման փուլ**

Շահագործման փուլում շատ կարևոր է, որ դպրոցական ենթակառուցվածքները և նրանց հետ կապված օբյեկտները պարբերաբար ստուգվեն կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, տեղական և տարածքային իշխանությունների կողմից պահպանելու համար վերջինիս պատշաճ տեխնիկական վիճակը և կանխել վնասները: Դպրոցական կառույցների և հարակից ենթակառուցվածքների սպասարկումը կիրականացվի պատշաճ և ժամանակին: Դպրոցականների համար համապատասխան պայմանների ստեղծման համար կիրականացվի սարքավորումների համապատասխան շահագործում:

**Կենցաղային աղբի կառավարում:** Յուրաքանչյուր դպրոցի հարակից տարածքում կտեղադրվեն աղբի հավաքման տարրաներ, որտեղ կհավաքվեն դպրոցների շահագործման ընթացքում առաջացած աղբը: Աղբի ժամանակին տեղափոխման և հաստատված տարածքում տեղադրման համար համապատասխան կազմակերպությունից կամ պետական մարմնից ձեռք կբերվի համաձայնություն կամ վերջիններից որևէ մեկի հետ կկնքվի պայմանագիր:

**Էլեկտրոնային թափոնների վերամշակում:** Ծրագրի կողմից ֆինանսավորվող համակարգիչների և էլեկտրոնային սարքավորումների արդիականացման արդյունքում ստացված և հնացած էլեկտրոնային սարքավորումները՝ դրանց ծառայության ժամկետը լրանալուց հետո կարող են վտանգ ներկայացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի համար՝ եթե չօգտագործել այն էկոլոգիապես հիմնավորված և անվտանգ ձևով: Քանի որ երկրում բացակայում են էլեկտրոնային թափոնների վերամշակման/օգտահանման ձեռնարկությունները, հնացած սարքավորումները պետք է պահվեն անվտանգ վայրում, քանի դեռ երկրում չեն ստեղծվել լիցենզավորված ձեռնարկություններ կամ արտասահման արտահանելը: Համապատասխան դրույթները ներառված են շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման մեղմացման և ծրագրի մոնիտորինգի գործիքների (Հավելված I) մեջ:

**Կեղտաջրերի կառավարում:** Մի քանի դպրոցներ միացված են քաղաքային կոյուղու ցանցին: Այն դեպքերում, երբ շենքերը միացված չեն քաղաքային կոյուղու ցանցին, բայց այն առկա է, այդ դեպքերում ծրագիրը կուսումնասիրի կոյուղու ցանցին դպրոցների շենքերի



միացումը, որպես վերանորոգման գործընթացի մի մաս: Այդ նպատակի իրականացման համար ծրագիրը կնպաստի Հայքրմուլկոյուղի ՓԲԸ-ի կամ այլ սպասարկող կազմակերպության հետ պայմանավորվածության ձեռք բերել համայնքի կեղտաջրերի հավաքման համակարգի շահագործման հարցում: Այն համայնքներում, որտեղ կենտրոնացված կոյուղու ցանցը առկա չէ պետք է կեղտաջրերը հավաքել սեպտիկ տարողության մեջ և համապատասխան կազմակերպության միջոցով հեռացնել դեպի մոտակա կոյուղու կենտրոնացված ցանց:

**Ջեռուցման համակարգի շահագործում:** Ջեռուցման համակարգի պատշաճ շահագործումը և տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև համակարգի պարբերաբար ստուգումները ջեռուցման ողջ սեզոնի ընթացքում կնպաստեն համակարգի անխափան աշխատանքի ապահովմանը, որն էլ իր հերթին կնպաստի ուսումնական գործընթացի անխափան ընթացքին և կնվազեցնի մթնոլորտ արտանետումները:

**Տանիքների և սարքավորումների տեխնիկական սպասարկումը:** Պետք է իրականացվի վերանորոգված դպրոցների շենքերի տանիքների և սարքավորումների պատշաճ սպասարկում, այդ թվում պարբերաբար ստուգումների և ըստ անհրաժեշտության վերանորոգման աշխատանքների իրականացմամբ: Դպրոցականների, ծնողների և դպրոցի աշխատողների անվտանգությունն ապահովելու համար ձմռան սեզոնին կիրականացվի տանիքների մաքրում:

**Դպրոցի բակի և մուտքի տարածքների սպասարկում:** Դպրոցի բակի և շենքի տեխնիկական սպասարկումը կիրականացվի դպրոցի ադմինիստրացիայի կողմից՝ ապահովելով լավ սանիտարական պայմաններ և հաճելի միջավայր: Դպրոցի մուտքի տարածքները կպահվեն մաքուր:

## **8. ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Ստորև բերվում են շրջակա միջավայրին առնչվող ՀՀ օրենքները և միջազգային համաձայնագրերը, որոնք կարգավորում են հասարակական խորհրդակցությունների և համակարգման, ինչպես նաև հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու խնդիրը՝

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014) ապահովում է քաղաքացիների իրավունքը պահանջելու տեղեկատվություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող գործունեության վերաբերյալ,
- «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներն ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուա, 1998, Հայաստանի Հանրապետությունը միացել է Կոնվենցիային 2001թ. մայիսի 14-ին):

ԿԲ Ծրագրի ԲՍԿՇՓ-ի նախագիծը հրապարակվել է և ներակայացվել է շահառուներին 22.04.2022 թվականին: Հանրային քննարկումներին հրավիրվել են շահառու պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, բնապահպանության ոլորտում գործող կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ:

## **9. ԵՆԹԱԾՐԱԳՐԻՆ ՀԱՏՈՒԿ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՎՈՐՈՒՄԸ**

Տեղական օրենսդրության և ՀԲ քաղաքականությունների համաձայն բնապահպանական վերլուծություն պահանջող շինարարական և վերականգնման աշխատանքների դեպքում (օրինակ՝ դպրոցների վերանորոգում և այլն) կմշակվեն ԲՍԿՊ ըստ ԲԿՇՓ Հավելված I-ում բերված բովանդակության: ԲՍԿՊ-ները կներառվեն մրցութային փաստաթղթերում և հետագայում կկազմեն շինարարական պայմանագրի մաս:

ԲՍԿՊ իրականացման և մոնիտորինգի գործում տարբեր կազմակերպությունների պատասխանատվությունները հսկիճ ամփոփված են ստորև.

**Նախագծային խորհրդատու կազմակերպությունը** պատասխանատու կլինի բնապահպանական և սոցիալական խնդիրներն իր աշխատանքի ընթացքում դիտարկելու և անբարեսպաստ ազդեցությունը նվազագույնի հասցնող նախագծային լուծումներ առաջարկելու համար: Այն դեպքում, երբ ԲՍԿՊ-ի մշակումը հանդիսանում է նախագծային կազմակերպության աշխատանքի բաղադրիչ մասը, խորհրդատուն պատասխանատու կլինի այս հետազոտությունների տեղական շահառուների հետ խորհրդակցելով իրականացման համար և ԲՍԿՊ հաշվետվությունների վերջնական տարբերակներում շահառուների, պատվիրատուի (ԿԾԿ) ու ՀԲ-ի առաջարկությունները ներառելու համար:

**Բնապահպանական խորհրդատուները** կարող են վարձվել ԿԾԿ-ի կողմից՝ ԲՍԿՊ-ը մշակելու համար, եթե այս գործառույթները ներառված չեն նախագծային խորհրդատուների առաջադրանքներում:

**Կապալառուները** պատասխանատու կլինեն ԲՍԿՊ-ների իրականացման աշխատանքները և առնչվող ծախսերն իրենց առաջարկներում պատշաճ կերպով ներառելու համար և պայմանագրային ժամկետներում ԲՍԿՊ-ների բոլոր պահանջների կատարման համար: Կապալառուները պետք է ունենան բոլոր առնչվող լիցենզիաները և թույլտվությունները:

**Տեխնիկական վերահսկող(ներ)ը** պատասխանատու կլինեն շինարարական աշխատանքների պատշաճ իրականացման վերահսկողության համար՝ ներառյալ համապատասխանությունը ԲՍԿՊ-ներում բերված միջազգառումներին, ինչպես նաև Բնապահպանական կառավարման ուղեցույցերին: Տեխնիկական վերահսկողը պատասխանատու կլինի ԲՍԿՊ-ներում բերված մեղմացման միջոցառումների ոչ պատշաճ իրականացումից առաջացող ցանկացած խնդիրների բացահայտման և համապատասխան ուղղիչ միջոցառումներ առաջարկելու համար: Տեխնիկական վերահսկողները պարտավոր են ստուգել կապալառուներին տրված բոլոր առնչվող լիցենզիաների և թույլտվությունների առկայությունը: Իրենց պարտականությունների պատշաճ մակարդակով կատարումն ապահովելու նպատակով տեխնիկական վերահսկողները պետք է ներառեն իրենց թիմերում համապատասխան փորձ և հմտություններ ունեցող անձնակազմ:

**ԿԾԿ ԾԻԳ-ը** կկազմակերպի ԲՍԿՊ-ի մշակումը և կապահովի այդ փաստաթղթերի համապատասխանությունը տեղական օրենսդրությանը և ՀԲ համապատասխան ԳՔ-ներին, կտրամադրի ԲՍԿՊ հաշվետվությունների նախնական տարբերակները ՀԲ-ին և կիրականացնի հանրային խորհրդակցությունները: ԲՍԿՊ հաշվետվությունները կմշակվեն հայերեն և անգլերեն լեզուներով, կիրապարակվեն հանրապետությունում և հասանելի կլինեն տեղական շահառուների համար ընդունելի ձևաչափով:

ԿԾԿ ԾԻԳ-ը նույնպես երաշխավորում է, որ ԲՍԿՊ-ները ներառված են շինարարական աշխատանքների մրցութային փաստաթղթերում այնպես, որ հնարավոր դիմողները կարողական ներառել ԲՍԿՊ իրականացման ծախսերը իրենց առաջարկներում: ԲՍԿՊ-ները կներառվեն շինարարական աշխատանքների պայմանագրերում և դրանց իրականացումը, որպես պայմանագրային հոդվածի, կլինի պարտադիր: ԿԾԿ ԾԻԳ-ը նույնպես պատասխանատու կլինի ԲՍԿՊ իրականացման մոնիտորինգի համար: Ամսական դաշտային մոնիտորինգի ստուգաթերթիկները կօգտագործվեն աշխատանքների պարբերական բնապահպանական վերահսկողության իրականացման համար: Բնապահպանական վերահսկողության առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունները կշմակվեն ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից և կտրամադրվեն ՀԲ-ին՝ որպես ընթացիկ հաշվետվողականության մաս:

**Շրջակա միջավայրի նախարարությունը** պատասխանատու է ՀՀ բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության ապահովման համար: ՇՄԼ գործառույթների շրջանակը ներառում է մասնակցությունը համապատասխան ոլորտի ազգային քաղաքականության մշակմանը, բնապահպանական ստանդարտների և ուղեցույցերի մշակմանը և կիրարկմանը:

**Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը** (որն ունի մարզային գրասենյակներ) շինարարական հրապարակներում իրականացնում է բնապահպանական ստուգումներ՝ բնապահպանական թույլտվությունների, պաշտոնական համաձայնությունների և լիցենզիաների պանանջներին համապատասխանությունը վերահսկելու նպատակով:

**Տարածքային և տեղական մարմինները** կհաստատեն շինարարության տեխնիկական առաջարկը և կտրամադրեն շինարարության թույլտվություն: Այս մարմինները նույնպես կարգավորում են տրանսպորտային միջոցների տեղաշարժը, շինարարական աղբի տեղադրումը կամ վերամշակումը:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված I: Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի ստուգաթերթիկ փոքրածավալ շինարարական կամ վերականգնման գործողությունների համար

#### Ստուգաթերթիկի օգտագործման ուղեցույց.

Ցածր ռիսկային տեղանքների համար, ինչպիսիք են դպրոցների կամ հիվանդանոցների վերականգնման գործողությունները, Համաշխարհային բանկի անվտանգության խումբը մշակել է ստուգաթերթիկի տեսքով ԲՍԿՊ-ի ձևաչափ, որը հնարավորություն է տալիս երաշխավորելու լավագույն փորձը ներկայացնող հիմնական միջոցառումները ընդունումը և կիրառումը փոքր ծավալի շինարարության համար առողջապահության, կրթության և հանրային ծառայությունների ոլորտներում: Ստուգաթերթիկի ձևաչափը մշակվել է «լավագույն փորձի» կիրառումն ապահովելու համար, և կազմված է այնպես, որ լինի հեշտությամբ իրականացվող և ՀԲ անվտանգության պահանջների համահունչ:

Ստուգաթերթիկի տեսքով ԲՍԿՊ-ի ձևաչափը հնարավորություն է տալիս անդրադառնալ հիմնական մեղմացման մոտեցումներին՝ գոյություն ունեցող ոռոգման համակարգերի վրա փոքրածավալ և տեղայնացված ազդեցություններ ունեցող վերականգնման աշխատանքների դեպքում: Այն ներառում է ԲՍԿՊ-ի և ԲԿՇՓ-ի հիմնական տարրերը՝ ՀԲ 4.01 «Բնապահպանական գնահատում» քաղաքականության պահանջներին համապատասխանելու համար: Սույն ստուգաթերթիկը կկիրառվի որպես ուղեցույց՝ ՀԲ ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում վերականգնման աշխատանքների իրականացնող կապալառուների համար, և կհանդիսանա մրցութային փաստաթղթերի և շինարարական աշխատանքների պայմանագրերի բաղկացուցիչ մաս:

ԲՍԿՊ ստուգաթերթիկը բաղկացած է երեք մասերից.

Մաս 1 ներառում է նկարագրողական բաժինը, որը բնութագրում է ծրագիրը, ներկայացնում կառուցվածքային և կարգավորող դաշտը, տալիս ծրագրի տեխնիկական նկարագրությունը, ներկայացնում կարողությունների զարգացման անհրաժեշտությունը և հակիճ տեղեկություններ տալիս հանրային քննարկումների մասին: Այս մասի ծավալը կազմում է մինչև 2 էջ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության դեպքում կարող են նաև տրվել հավելվածներ:

Մաս 2 ներկայացնում է հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները գնահատող ստուգաթերթիկը, որի միջոցով գործողությունները և հնարավոր բնապահպանական խնդիրները կարող են նշվել պարզ «Այո/Ոչ» ձևաչափով: Եթե որևէ գործողության / ազդեցության համար տրվել է «Այո» պատասխանը, ապա պետք է ներկայացվի հղում՝ Մաս Գ-ի աղյուսակի համապատասխան բաժնին, որը և ներառում է հստակ սահմանված բնապահպանական և սոցիալական կառավարման և մեղմացման միջոցառումները:

Մաս 3 ներկայացնում է բնապահպանական մեղմացման պլանը, որը հնարավորություն է տալիս պատշաճ կերպով հետևելու Մաս Բ-ում բերված գործողություններին: Այն ունի Բնապահպանական կառավարման պլանների համար պահանջվող

ձևաչափ, որը մշակվել է Բ դասի ծրագրերի անվտանգության պահանջների համապատասխան: Սույն ստուգաթերթիկի նպատակն է, որ դրա Ա և Բ մասերը ներառվեն շինարար կապալառու կազմկերպություններին տրվող մթցության փաստաթղթերում, որի գները կորոշվեն մրցության գործընթացում և դրանց պատշաճ իրականացումը կվերահսկվի աշպատանքների իրականացման ընթացում:

Բովանդակություն.

- Ընդհանուր ծրագրի և տեղանքի մասին տեղեկատվություն
- Անվտանգության վերաբերյալ տեղեկատվություն
- Մեղմացման միջոցառումներ
- Մոնիտորինգի պլան

**ՄԱՍ Ա: Ընդհանուր ծրագրի և տեղանքի մասին տեղեկատվություն**

Կառուցվածքային և վարչարարական տվյալներ			
Երկիր			
Ծրագրի անվանումը			
Ենթածրագրի անվանումը			
Տեղանքին հատուկ գործողության շրջանակը			
Կառուցվածքային կազմը (ՀԲ)	Ծրագրի խմբի ղեկավարներ	Անվտանգության մասնագետներ	
Իրականացման կազմը (ՀՀ)	Իրականացնող կազմակերպություն ԿԾԿ	Վերահսկող ընկերություն (ընտրված չէ)	Կապալառու ընկերություն (ընտրված չէ)
Նախագծի և տեղանքի նկարագրությունը			
Ենթածրագրի նկարագրությունը			
Դպրոցական հաստատության անվանումը			
Դպրոցի հասցեն և գտնվելու վայրը			
Հողօգտագործումը և հողի սեփականատերը			
Տեղանքի հակիրճ նկարագրությունը (ֆիզիկական և բնական միջավայր): Սոցիալական և դեմոգրաֆիկ ենթատեքստը (աշակերտների քանակը, հաճախելիությունը, զբաղվածությունը, և այլն)			
Մոտակա գոյություն ունեցող լիցենզավորված շինարարական նյութերի հանքի, քարհանքի և ջրաղբյուրի տեղակայման վայրը			
Օրենսդրություն			
Ազգային և տեղական օրենսդրությունը և թույլտվությունները որոնք վերաբերում են ծրագրի գործունեությանը			
Հանրային խորհրդակցություն			
Տվյալներ երբ/որտեղ են իրականացվել/իրականացվելու հանրային խորհրդակցությունները			
Հավելվածներ			

*Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ  
Կրթության բարելավման ծրագիր*

---

Հավելված 1. Ծրագրի տարածքի քարտեզ

Հավելված 2. Ծրագրի տարածքի և շինության ներսի լուսանկարներ

Հավելված 3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական

Հավելված 4. Շենքի տեխնիկական վիճակի և սեյսմակայունության վերաբերյալ տեխնիկական եզրակացությունը

Հավելված 5. Շին. թույլտվություն

Հավելված 6. Աղբի հեռացման համաձայնագիր

Հավելված 7. Հանրային խորհրդակցության արձանագրություն



**ՄԱՍ Բ: ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԱՏՈՒԳՈՒՄ			
	Գործունեություն / խնդիր	Կարգավիճակ	Գործարկված պահանջները
Արդյո՞ք տեղանքում գործունեությունը ներառում է հետևյալներից որևէ մեկը	1. Շինության վերականգնում	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	2. Նոր շինարարություն	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	3. Կեղտաջրերի մշակման առանձին համակարգ	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Բ-ն ստորև
	4. Պատմական շենքեր և շրջաններ	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Գ-ն ստորև
	5. Հողի օտարում <sup>1</sup>	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Դ-ն ստորև
	6. Վտանգավոր կամ թունավոր նյութեր <sup>2</sup>	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ե-ն ստորև
	7. Էլեկտրոնային թափոններ	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Զ-ն ստորև
	8. Ազդեցություններ անտառների կամ պահպանվող տարածքների վրա	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Է-ն ստորև
	9. Բժշկական թափոնների հեռացում/ կառավարում	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ը-ն ստորև
	10. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Թ-ն ստորև
	11. Սոցիալական ռիսկ	<input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ժ-ն ստորև

<sup>1</sup>Հողի օտարումը ներառում է մարդկանց տեղահանումը, ապրուստի փոփոխությունը, մասնավոր սեփականություն մուտք գործելը, որը վերաբերում է գնված / փոխանցված հողին, ազդեցություն է թողնում օտարվող հողի վրա ապրող և/կամ ինքնական տեղավորված և/կամ գործունեություն վարող (օրինակ՝ տաղավար ունեցող) մարդկանց վրա:  
<sup>2</sup>Թունավոր/վտանգավոր նյութերը ներառում են, սակայն սահմանափակված չեն ասբեստով, թունավոր ներկերով, թունավոր լուծիչներով, կապար պարունակող ներկի հեռացմամբ և այլն: ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2291-Ն որոշում «Թափոնների գոյացման կարգի մասին» և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգ>>, ՀՀ օր Ե ն քը Թափոնների մասին՝ ընդունված՝ 2004 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՀ Բնապահպանության նախարարի 25.12.2006 N430-Ն հրամանն «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին»>

**ՄԱՍ Գ: ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ
0. Ընդհանուր պայմաններ	Տեղեկությունների տրամադրում և աշխատողների անվտանգություն	(ա) Տեղական շինարարական և բնապահպանական տեսչություններն ու համայնքները տեղեկացված են նախատեսվող միջոցառումների վերաբերյալ (բ) Հասարակությունը տեղեկացված է նախատեսվող աշխատանքների մասին լրատվամիջոցների օգնությամբ և/կամ հասարակական վայրերում՝ ներառյալ աշխատանքների կատարման վայրը) (գ) Ձեռք են բերվել շինարարական և/կամ վերականգնման աշխատանքների կատարման համար պահանջվող բոլոր թույլտվությունները (դ) Կապալառուն պաշտոնապես համաձայնում է, որ բոլոր աշխատանքները իրականացվեն պատշաճ կերպով, պահպանելով անվտանգության պահանջները՝ հարևան բնակիչների ու շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով (ե) Աշխատողների անհատական պաշտպանիչ արտահագուստը (ԱՊԱ) պետք է համապատասխանի միջազգային լավագույն փորձին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում դիմակներ և ակկոցներ, պաշտպանիչ բաճկոնակներ և կոշիկներ) (զ) Շինարարական հրապարակում համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրումը հնարավորություն կտա տեղեկացնելու բանվորներին հիմնական կանոնների վերաբերյալ, որոնց անհրաժեշտ է հետևել աշխատանքներ իրականացնելիս
Ա. Վերականգնման և / կամ շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(ա) Առաջին հարկից վերև ներսում քանդման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն աղբահան խողովակներ, (բ) Քանդված մնացորդները, փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա պետք է ջուր ցողալ՝ փոշին նստեցնելու նպատակով (գ) Պնևմատիկ փորման կամ ծածկի ու հիմքերի քանդման ժամանակ, փոշին պետք է նստեցնել անընդհատ ջուր ցողալով և/կամ հրապարակում տեղադրելով փոշին նստեցնող ծածկոց (դ) Շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհը) պետք է զերծ պահվի հողից և մնացորդներից՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով (ե) Շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօդյա այրումը չի թույլատրվում (զ) Շինարարական հրապարակներում մեքենաները չպետք է պարապուրդի մատնվեն
	Աղմուկ	(ա) Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը պետք է սահմանափակվի համաձայնեցման մեջ նշված ժամերով

Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ  
 Կրթության բարելավման ծրագիր

		(բ) Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորիս հեռու
	Ջրի որակ	(ա) Հրապարակում պետք է իրականացվեն էրոզիայի և նստվածքների կարգավորման համապատասխան միջոցառումներ, օրինակ՝ տեղադրվեն հարդի պարկեր և/կամ նստվածքի հեռացման ցանցեր՝ նստվածքների հրապարակից հեռացումը, և ջրահեռացման համակարգում ու մոտակա ջրհոսքերում և գետերում ավելցուկային տուրբուլենտությունը կանխելու նպատակով
	Թափոնների կառավարում	(ա) Աղբի հավաքումը, դրա հեռացման ուղիները և տեղադրման վայրերը պետք է հստակեցվեն աղբի հիմնական տեսակների համար, որոնք կառաջանան փորումից, քանդումից և շինարարական գործունեությունից (բ) Շինարարական և քանդման աշխատանքներից առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղանքում դրանց բաժանումը իրականացնելով և համապատասխան կոնտեյներներում պահելով, (գ) Շինարարական աղբը պետք է հավաքվի և տեղադրվի աղբավայրում՝ պատշաճ կերպով հավաստագրված հավաքողների կողմից (դ) Շինարարական աղբի հեռացման վերաբերյալ պետք է կատարվեն գրառումներ, ինչը հնարավորություն կտա երաշխավորելու պատշաճ կառավարումը (ե) Հնարավորության դեպքում կապալառուն կիրականացնի պիտանի նյութերի վերամշակում և դրանց կրկնակի օգտագործում (ասբեստ պարունակող նյութերի բացառությամբ)
Բ. Կեղտաջրերի մշակման առանձին համակարգ	Ջրի որակ	(ա) Սանիտարական աղբի և շինարարական հրապարակներից (տեղադրում կամ վերակառուցում) եկող կեղտաջրերի մշակման մոտեցումները պետք է հաստատվեն տեղական իշխանությունների կողմից (բ) Նախքան ջրերի թափումը, կեղտաջրերի մշակման առանձին համակարգերից արտահոսող աղտոտիչները պետք է մշակվեն՝ աղտոտիչների որակի և կեղտաջրերի մշակման ազգային ուղեցույցերով սահմանված որակի նվազագույն չափանիշներից համապատասխանելու նպատակով (գ) Պետք է իրականացվի նոր կեղտաջրերի մշակման համակարգերի մոնիտորինգ (մինչև / հետո) (դ) Շինարարական մեքենաները և սարքավորումը պետք է լվացվեն հատուկ այն նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում
Գ. Պատմական շինություններ	Մշակութային ժառանգություն	(ա) Եթե շինարարական աշխատանքներն իրականացվում են պատմական շինության մոտակայքում կամ պատմական տարածքում, ծանուցում պետք է ուղարկվի և համաձայնություններ / թույլտվություններ ստացվեն տեղական իշխանություններից, և բոլոր շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն ազգային

Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ  
 Կրթության բարելավման ծրագիր

		<p>օրենսդրության պահանջների համաձայն</p> <p>(բ) Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոները պետք է գրանցվեն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի պատասխանատու մարմիններին, աշխատանքները պետք է հետաձգվեն կամ դրանց կատարման վայրը փոփոխվի՝ գտածոների հետագան պարզելու նպատակով</p>
Դ. Հողի օտարում	Հողի օտարման պլան / շրջանակ	<p>(ա) Եթե հողի օտարում չէր ակնկալվում, սակայն պահանջվում է, կամ եթե օրինական և ոչ օրինական օգտագործողների եկամտի վրա ազդեցություն չէր ակնկալվում, սակայն կարող է առաջանալ, ապա Բանկի խմբի ղեկավարը պետք է անմիջապես տեղեկացվի</p> <p>(բ) Հաստատված Հողի օտարման պլանը / շրջանակը (եթե այն պահանջվում է ծրագրի համար) պետք է իրականացվի</p>
Ե. Թունավոր նյութեր	Ասբեստի կառավարում	<p>(ա) Եթե ասբեստը տեղակայված է ծրագրի տարածքում, այն պետք է հստակ մակնշված լինի որպես վտանգավոր նյութ</p> <p>(բ) Հնարավորության դեպքում ասբեստը պետք է ծածկված լինի՝ դրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով</p> <p>(գ) Նախքան հեռացումը (եթե հեռացումն անհրաժեշտ է) ասբեստը պետք է մշակվի խոնավ նյութով՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով</p> <p>(դ) Ասբեստը պետք է մշակվի և հեռացվի փորձառու և մասնագիտացած անձնակազմի կողմից</p> <p>(ե) Եթե ասբեստ պարունակող նյութերը չեն կարող պահվել ժամանակավորապես, թափոնները պետք է պահվեն կոնտեյներների մեջ՝ համապատասխան մակնշումով: Անվտանգության միջոցառումներ պետք է իրականացվեն՝ հրապարակից դրանց չարտոնագրված հեռացումը բացառելու նպատակով</p> <p>(զ) Հեռացված ասբեստի կրկնակի օգտագործումը չի թույլատրվում</p>
	Թունավոր / վտանգավոր թափոնների կառավարում	<p>(ա) Վտանգավոր և թունավոր նյութերի ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի ապահով կոնտեյներներում՝ նշելով դրանց բաղադրության, հատկությունների և մշակման վերաբերյալ տեղեկությունները</p> <p>(բ) Վտանգավոր նյութեր պարունակող կոնտեյներները պետք է տեղադրվեն անջրաթափանց կոնտեյների վրա՝ արհատոսքը բացառելու նպատակով</p> <p>(գ) Թափոնները պետք է տեղափոխվեն հատուկ հավաստագրված փոխադրողների կողմից և տեղադրվեն հավաստագրված վայրում</p> <p>(դ) Թունավոր բաղադրիչներ պարունակող ներկերի կամ լուծիչների կիրառումը չի թույլատրվում</p>
Զ. Էլեկտրոնային	Է-թափոններ	<p>ա) Ապահովել էլեկտրոնային թափոնների կառավարմանը մասնակցող անձակազմի պատշաճ ուսուցումը</p>

*Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ  
Կրթության բարելավման ծրագիր*

<p>թափոնների կառավարում</p>		<p>(բ) Հնարավորության դեպքում իրականացնել հնացած սարքավորումների և նյութերի կրկին օգտագործում (գ) Ապահովել հավաքված էլեկտրոնային թափոնների տեղափոխումը այնպես, որ չսահմանափակվի կրկնակի օգտագործման հնարավորությունը (դ) Էլեկտրոնային թափոնները տեղափոխումը և պահպանումը իրականացնել այնպես, որպեսզի բացառվի վնասվելու և/կամ արտահոսքի հետևանքով վտանգավոր նյութերի ներթափանցումը օդի, ջրի կամ հողի մեջ (ե) Հստակ պիտակավորել էլեկտրոնային թափոններ պարունակող բեռնարկերը, ծղոտե ներքնակները կամ փաթեթները (զ) Չխառնել էլեկտրոնային թափոնները որևէ այլ տեսակի թափոնների հետ (է) Էլեկտրոնային թափոնների անվտանգ պահպանման վայրը պաշտպանել չարտոնված ներթափանցումից և գողությունից, մինչև այն տեղափոխվի գրանցված հավաքման վայր (ը) Պահպանել էլեկտրոնային թափոնները շինության կամ մեքենայի ներսում անթափանց մակերևույթի վրա, որպեսզի դրանք պաշտպանված լինեն մթնոլորտային տեղումներից (թ) Պահպանել համարժեք և բավարար պահեստային տարածք (ժ) Դպրոցներում հավաքված էլեկտրոնային թափոնների տեսակների փաստաթղթավորման համար (I); և (II) մուտքային և ելքային էլեկտրոնային թափոնների քանակները: Փաստաթղթավորումը պատշաճ կառավարման ապացույց է (օրինակ՝ վերամշակված, վերականգնված, լքված, արտահանված) (ի) Էլեկտրոնային թափոնների և դրանց պահպանման ընթացքում ալկալիային մարտկոցներ պարունակող սարքերին վերաբերվել որպես վտանգավոր թափոնների (լ) Միջոցներ ձեռնարկել կանխելու էլեկտրոնային թափոնների մուտքը աղբավայր</p>
<p>Է. Ազդեցություններ անտառների, գերխոնավ և/կամ պահպանվող տարածքների վրա</p>	<p>Էկոհամակարգի պահպանություն</p>	<p>(ա) Բոլոր ընդունված բնադրավայրերը, գերխոնավ և պահպանվող տարածքները, որոնք գտնվում են հրապարակի անմիջական մոտակայքում չպետք է վնասվեն կամ օգտագործվեն, աշխատակազմին պետք է խիստ արգելվի իրականացնել որս, խետահավաք, ջրածածկում կամ այլ վնասակար գործողություններ (բ) Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, խոշոր ծառերը պետք է մակնշվեն և ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի և ծառերին վնաս հասցնելը՝ բացառվի (գ) Հարակից գերխոնավ տարածքները և ջրահոսքերը պետք է պահպանվեն արտահոսքից՝ էրոզիան և նստվածքի առաջացումը կարգավորող համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով, որոնք ներառում են սակայն սահմանափակված չէն հարդի պարկերի և նստվածքների հեռացման ցանցերի տեղադրմամբ (դ) Չհավաստագրված հանքավայրերի, քարհանքերի, աղբավայրերի օգտագործումը չի թույլատրվում՝ հատկապես պահպանվող տարածքներում</p>

*Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ  
Կրթության բարելավման ծրագիր*

Ը. Բժշկական թափոնների հեռացում	Բժշկական թափոնների կառավարման ենթակառուցվածքներ	<p>(ա) Համաձայն տեղական օրենսդրության՝ կապալառուն պետք է ապահովի, որ նոր կառուցված և/կամ վերակառուցված առողջապահական կառույցները ներառում են բավարար ենթակառուցվածքներ բժշկակալ թափոնների կառավարման և հեռացման համար, ինչը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• հավաքված բժշկական թափոնների համար հատուկ կառույցները (ներառյալ սուր գործիքները, մարդու մարմնի հյուսվածքները և հեղուկները) ստացված այլ թափոնների հեռացումից, և</li> <li>• բժշկական թափոնների պահման համապատասխան կառույցների առկայությունը, և</li> <li>• թե գործունեությունը ներառում է ներքին մշակումը, ապա հեռացման համապատասխան հնարավորությունները առկա են և աշխատունակ</li> </ul>
Թ. Երթևեկության և հետիոտնի անվտանգություն	Շին. աշխատանքների իրականացման արդյունքում հանրային երթևեկությանը և հետիոտնին հասցված ուղղակի կամ անուղղակի վնաս	<p>(ա) Համաձայն տեղական օրենսդրության՝ կապալառուն պետք է ապահովի շինարարական հրապարակի անվտանգությունը և երթևեկության կարգավորումը: Այս միջոցառումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում</p> <ul style="list-style-type: none"> <li>• ցուցապաստառների, զգուշացնող նշանների, արգելափակողների տեղադրմամբ, երթևեկության շրջանցող ուղիների ապահովմամբ՝ շինարարական հրապարակը լավ տեսանելի դարձնելու և բնակչությանը հնարավոր վտանգների մասին զգուշացնելու նպատակով</li> <li>• երթևեկության կառավարման համակարգի առկայությամբ և անձնակազմի ուսուցմամբ, հատկապես շինարարական տեղանք մուտք գործելու և հրապարակի մերձակայքում ցանրաբեռնված երթևեկության դեպքում</li> <li>• Աշխատանքային ժամերի փոփոխմամբ՝ համապատասխանեցնելով դրանք տեղական երթևեկության առանձնահատկություններին, օրինակ՝ պիկային ժամերին կամ անասունների տեղաշարժի ժամերին փոխադրումների կատարումից խուսափելով</li> <li>• Անհրաժեշտության դեպքում՝ պատրաստված անձնակազմի կողմից երթևեկության կառավարման իրականացմամբ՝ հրապարակում մարդկանց անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով</li> <li>• Շինարարության ընթացքում գրասենյակային կառույցների, խանութների և բնաշիկների անվտանգ ու շարունակական հասանելիության ապահովմամբ</li> </ul>
Ժ. Սոցիալական ռիսկ	Հանրային հարաբերությունների կառավարում	<ul style="list-style-type: none"> <li>• բնակչության կողմից դիմում-բողոքներ ստանալու համար տեղում կապալառուի թիմից պատասխանատու նշանակել</li> <li>• խորհրդակցել տեղական համայնքների հետ՝ արտաքին աշխատուժի և տեղի բնակչության միջև հնարավոր հակամարտությունները բացահայտելու և կանխարգելելու նպատակով</li> <li>• բարձրացնել տեղական համայնքի իրազեկությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ռիսկի վերաբերյալ, կապված արտաքին աշխատուժի ներկայության հետ և</li> </ul>

		<p>տեղական համայնքներին ներգրավել իրազեկման աշխատանքներում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• բնակչությանը պատշաճ կերպով տեղեկացնել շինարարության, ծառայությունների ընդհատման, երթևեկության շրջանցման երթուղիների, ժամանակավոր ավտոբուսային երթուղիների, պայթեցման և քանդման աշխատանքների գրաֆիկների մասին:</li> <li>• սահմանափակել գիշերային ժամերի շինարարական աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում համոզվել, որ գիշերային աշխատանքները պատշաճ կերպով է կազմակերպվում և իրականացվում, ինչպես նաև համայնքը պատշաճ կերպով տեղեկացված է:</li> <li>• առնվազն հինգ օր առաջ տեղի բնակչությանը տեղյակ պահել մատուցվող ծառայությունների հնարավոր խափանումների մասին (ներառյալ ջուր, էլեկտրականություն, հեռախոս, ավտոբուսային երթուղիներ)՝ հասարակական վայրերում, ավտոբուսի կանգառներում, բնակելի տներին հարակից շինությունների մոտ տեղադրելով պաստառներ,</li> <li>• Կապալառուի պատասխանատվության շրջանակներում գործատուի կողմից սահմանված ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրների լուծում՝ բողոքների մեխանիզմի միջոցով</li> <li>• Հնարավորության դեպքում աշխատանքային ճամբարները չպետք է տեղակայվեն տեղական համայնքներին մոտ:</li> <li>• Աշխատանքային ճամբարների տեղադրումը և շահագործումը պետք է իրականացվի հարևան համայնքների հետ խորհրդակցելով</li> </ul>
	<p>Աշխատուժի կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Կապալառուն տեղական համայնքներից կներգավի չորակավորված կամ ցածր որակավորում ունեցող աշխատողներ: Իսկ հնարավորության դեպքում կկազմակերպի ուսուցում, որպեսզի խթանվի տեղի բնակչության ներգրավվածությունը իրականացվող աշխատանքներում:</li> <li>• Կապալառուն աշխատանքների իրականացման վայրում կապահովի հիգիենայի համար համապատասխան սարքերով (զուգարաններ և լվացքատներ), տաք և հոսող սառը ջրի, օճառի և ձեռքի չորացման, ախտահանման համար անհրաժեշտ նյութերի մատակարարմամբ: Ցանկացած բնակելի աշխատանքային ճամբարի համար պետք է ստեղծվի ժամանակավոր սեզոնային ախտահանման համակարգ՝ առանց հարևան ջրատարների աղտոտման</li> <li>• Կապալառուն պետք է բարձրացնի աշխատողների իրազեկությունը տեղի բնակչության հետ ընդհանուր հարաբերությունների վերաբերյալ, համաձայն միջազգային պրակտիկայի հաստատի և խստորեն պահպանի վարքագծի կանոնները, և անհրաժեշտության դեպքում օգտագործի համապատասխան պատժիչ միջոցառումներ՝ ներառյալ աշխատողներին աշխատանքից ազատելը և ֆինանսական տույժերը:</li> </ul>

**ՄԱՍ Դ: ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ**

Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Գինը (եթե ներառված չէ ծրագրի բյուջեում)	Ո՞վ (է պատասխանատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
<b>ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ</b>						
1.						
2.						
3.						
...						
<b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b>						
1.						
2.						
3.						
...						



**ՄԱՍ Ե: Է-ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ**

Գործունեությունը	Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ո՞վ (է պատասխա- նատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
ՏՀՏ սարքավորումներ ի տրամադրում	Գրանցված մատակարարներից ՏՀՏ սարքավորումների գնում	Մատակարարի գրասենյակում կամ պահեստում	Փաստաթղ թերի ստուգում	Մատակարարման պայմանագրերի կնքման ժամանակ	ՏՀՏ սարքավորումների հուսալիության և մարդու առողջության համար անվտանգության ապահովում	ԾԻԳ
Փաթեթավորումից առաջացող թափոններ	<ul style="list-style-type: none"> <li>- Հատուկ հատկացված վայրերում թափոնների համար նախատեսված տարաներում փաթեթավորման նյութերի ժամանակավոր պահպանում,</li> <li>- Փաթեթավորումից առաջացած թափոնների ժամանակին տեղափոխումը թափոնների կառավարման տեղական համակարգի միջոցով:</li> </ul>	Գործունեության իրականացման վայր  Թափոնի վերամշակման վայր	Գործունե ության վերահսկո ղություն	Պարբերաբար սարքավորումների տեղադրման ժամանակ և վերջում	<ul style="list-style-type: none"> <li>- Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում</li> <li>- Ցրված բեկորներից և նյութերից հնարավոր դժբախտ դեպքերից խուսափում</li> <li>- Աշխատավայրի և միջավայրի գեղագիտական արտաքին տեսքի պահպանում</li> </ul>	ԾԻԳ  Դպրոցի ղեկավարություն
Է-թափոնների մինիմիզացիա	<ul style="list-style-type: none"> <li>- Ձեռք բերել վերամշակվակվող բաղադրիչներով ապրանքներ;</li> <li>- Ձեռք բերել ավելի երկար երաշխիքային ժամկետ ունեցող ապրանքներ;</li> <li>- Ընտրել հեշտ թարմացվող սարքավորումներ.</li> </ul>	Մատակարարի գրասենյակում կամ պահեստում Դպրոցի տարածքում	Փաստաթղթեր ի ստուգում Սարքավորում ների ստուգում	Մատակարարման պայմանագրերի կնքման ժամանակ	Սահմանափակել էլեկտրոնային թափոնների ազդեցությունները շրջակա միջավայրի վրա	ԾԻԳ

Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ  
 Կրթության բարելավման ծրագիր

<p>Տեղում թափոնների հավաքում՝ կրկնակի օգտագործման և վերամշակման համար</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Էլեկտրոնային թափոնների պատշաճ հավաքում, որը չի սահմանափակում կրկնակի օգտագործման հնարավորությունը.</li> <li>- Էլեկտրոնային թափոնների պատշաճ առանձնացված հավաքում.</li> <li>- Էլեկտրոնային թափոնների հավաքում դպրոցների հատուկ հատկացված տարածքներում (անթափանց մակերես, արևի ուղիղ ճառագայթների և տեղումների բացակայություն);             <ul style="list-style-type: none"> <li>- Էլեկտրոնային թափոնների նախապատրաստում տեղում ժամանակավոր պահեստավորման համար՝ պատշաճ փաթեթավորման և ամբողջական պիտակավորման միջոցով (բաղադրության և օգտագործման վերաբերյալ տեղեկություններ):</li> </ul> </li> </ul>	<p>Դպրոցի տարածքում</p>	<p>Գործունեության վերահսկողություն</p>	<p>Հին սարքավորումների փոխարինման ժամանակ</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Հնարավորության դեպքում ապահովել ապամոնտաժված Սարքավորումներ ի կրկնակի օգտագործումը,</li> <li>- Խուսափել վնասի և (կամ) արտահոսքի հետևանքով վտանգավոր նյութերի օդ, ջուր կամ հող արտանետումից,</li> <li>- Ապահովել պատշաճ պահպանություն</li> </ul>	<p>ԾԻԳ</p>
---	---	-------------------------	--	---	--	------------

Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ  
 Կրթության բարելավման ծրագիր

<p>Էլեկտրոնային թափոնների պահեստավորում</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Էլեկտրոնային թափոնների տեղում ժամանակավոր պահպանման համար տարածքների պատրաստում (անթափանց հատակի ապահովում, տեղումներից պաշտպանություն, անվտանգության համակարգեր և այլն);</li> <li>- Համարժեքորեն ապահովված պահեստավորման վայր, որը պաշտպանված է չարտոնված մուտքից և գողությունից.</li> <li>- Հստակ մակնշված տարաներ, ծղոտե ներքնակներ կամ էլեկտրոնային թափոններ պարունակող փաթեթներ.</li> <li>- Էլեկտրոնային թափոնների անվտանգ տեղակայում ժամանակավոր պահեստավորման համար:</li> </ul>	<p>Էլեկտրոնային թափոնների ժամանակավոր պահպանման ման վայր</p>	<p>Տեսողական զննում</p>	<p>Էլեկտրոնային թափոնների պահեստավորման ժամանակ պարբերաբար</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Կանխել վտանգավոր նյութեր պարունակող էլեկտրոնային թափոնների ամբողջական կամ բաղադրիչների տարածումը շրջակա միջավայր,</li> <li>- Կանխել էլեկտրոնային թափոնները մուտքը աղբավայր,</li> <li>- Կանխել էլեկտրոնային թափոնների</li> <li>- ապօրինի վերամշակումը:</li> </ul>	<p>ԾԻԳ</p>
---	---	--	-------------------------	--	---	------------

**Հավելված II: Ամսական դաշտային բնապահպանական մոնիտորինգի ստուգաթերթիկ**

<b>Հրապարակի տեղակայման վայրը</b>					<b>Նշումներ</b>
<b>Կապալառուի անվանումը</b>					
<b>Վերահսկողի անունը</b>					
<b>Այցի ամսաթիվը</b>					
<b>Շինարարական աշխատանքների կարգավիճակը</b>					
<b>Ստուգման ենթակա փաստաթղթերը և գործառույթները</b>	<b>Կարգավիճակ</b>				
	<b>Այո</b>	<b>Մասամբ</b>	<b>Ոչ</b>	<b>Ո/Կ</b>	
Կապալառուին ունի բնական ռեսուրսների արդյունահանման թույլտվություն					
Կապալառուին ունի թափոնների հեռացման համաձայնագիր					
Շինարարական հրապարակը ցանկապատված է և նախագգուշացնող նշանները տեղադրված են					
Աշխատանքները չեն խանգարում հետիոտնի և մեքենաների տեղաշարժմանը, կամ ապահովված է ժամանակավոր այլընտրանքային մոտեցումը					
Աշխատանքային ժամերը պահպանվում են					
Շինարարական մեքենաները և սարքավորումները ստանդարտ տեխնիկական վիճակում է (ավելցուկային ծովսը և աղմուկը, վառելիքի և քսայուղերի արտահոսքը բացակայում է)					
Շինարարական նյութերը և թափոնները տեղափոխվում են ծածկ ունեցող մեքենաներով					
Շինարարական հրապարակը ջրվում է՝ չափից ավել փոշի առաջացնող աշխատանքների դեպքում					
Շինարարական ճամբարը կամ աշխատանքային տարածքը ցանկապատված է, թափոնների ժամանակավոր կուտակման վայրերը և մեքենաների/ սարքավորումների սպասարկման հրապարակները սահմանված են					
Շինարարական ճամբարը ապահովված է ջրամատակարարմամբ և ջրահեռացմամբ					

*Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ  
Կրթության բարելավման ծրագիր*

Շինարարական ճամբարը կահավորված է առաջին բժշկական օգնության և հակահրդեհային միջոցներով					
Բանվորները կրում են պաշտպանիչ արտահագուստ, որը համապատասխանում է իրականացվող տեխնոլոգիական գործընթացներին (ձեռնոցներ, սաղավարտներ, շնչադիմակներ, ակնոցներ և այլն)					
Մեքենաների և մեխանիզմների սպասարկումը և լիցքավորումն իրականացվում է անթափանց հարթակի վրա, հատուկ տարածքում, որտեղ կարող են կուտակվել շահագործման և արտակարգ պատահարների արդյունքում առաջացող արտահոսքերը					
Մեքենաների և մեխանիզմների վնասումն իրականացվում է բնական ջրային օբյեկտներից հեռու՝ բացառելով արտահոսքի ուղղակի թափանցումը բնական ջրեր					
Շինարարական թափոնները տեղադրվում են բացառապես հատուկ սահմանված վայրերում					
Բնական շինանյութերի արդյունահանումը կատարվում է լիցենզիայում նշված պայմանները խստորեն պահպանելով					
Հողային աշխատանքների արդյունքում առաջացած ավելցուկային նյութերը և հողի վերին շերտը պետք է պահվեն առանձին և հետագայում օգտագործվեն հետլիցքի/տեղանքի բարեկարգման համար					
Պատահական գտածոների հայտնաբերման դեպքում աշխատանքները պետք է դադարեցվեն և պետք է կապ հաստատվի մշակութային ժառանգության պահպանման համար պատասխանատու պետական մարմինների հետ					
Հրապարակում ֆիզիկական աշխատանքների ավարտից հետո՝ հրապարակը/ճամբարը պետք է մաքրվեն ցանկացած մնացորդներից և համապատասխանեցվեն շրջապատող լանդշաֆտին					

### **Հավելված III: Հանրային խորհրդակցության արձանագրություն**

#### **ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՂԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ամսաթիվը՝ 22 ապրիլի 2022թ.

Վայրը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԿԾԿ ԾԻԳ հանդիպումների սրահ

Հանդիպումը սկսվեց ժամը 14:00-ին:

Ընդհանուր առմամբ հանդիպմանը ներկա էին 16 մասնակիցներ, այդ թվում՝ պետական գերատեսչությունների, ԿԾԿ ԾԻԳ-ի, տեղական ինքնակառավարման մարմինների, բնապահպանական ոլորտում գործող կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլն: Մասնակիցների ցանկը կցված է (Հավելված I): Հանրային խորհրդակցության ընթացքում արված լուսանկարները ներկայացված են Հավելված II-ում:

Հանդիպումը բացեց ԿԾԿ ԾԻԳ-ի ներկայացուցիչ տիկին Ա. Խաչատրյանը: Նա ներկայացրեց հանրային խորհրդակցության նպատակը և հակիրճ մանրամասներ ներկայացրեց Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման պատրաստման և իրականացման վերաբերյալ: Տիկին Խաչատրյանն ընդգծեց ծրագրի նախապատրաստական փուլում իրականացվող բնապահպանական և սոցիալական վերլուծությունների կարևորությունը: Նա նշեց նաև, որ քննարկվելիք փաստաթղթերը տեղադրվել են ԿԾԿ ԾԻԳ-ի կայքում և և ցանկության դեպքում էլեկտրոնային և տպված տարբերակներով կարող են վերցվել ԿԾԿ ԾԻԳ-ից: Տիկին Խաչատրյանը ողջունեց մասնակիցներին և հակիրճ ներկայացրեց Կրթության բարելավման ծրագրի-ի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը, ներառյալ առաջարկվող ծրագրի տարբեր բաղադրիչներով նախատեսված աշխատանքները:

Բացման խոսքից հետո բնապահպանական մասնագետը ներկայացրեց Կրթության բարելավման ծրագրի Լրացուցիչ ֆինանսավորման համար մշակված Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթը: Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթի (ԲՍԿՇՓ) ներկայացման ընթացքում անդրադարձավ ԲՍԿՇՓ-ի մշակման գործընթացին, դրա նպատակներին և փաստաթղթում դրված խնդիրներին: Տեղեկատվություն ներկայացվեց նաև Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականությունների, յուրաքանչյուր քաղաքականության կիրառումը

հարուցող գործոնների, Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերաբերյալ և այն մարմինների մասին, որոնք կարող են առնչվել և ներգրավված լինել Ծրագրում: Ներկայացվեցին շինարարական և վերականգնման աշխատանքների հետ կապված հնարավոր բնապահպանական ազդեցությունները, ինչպես նաև ազդեցությունները մեղմացնող կամ նվազագույնի հասցնող հիմնական մեղմացման միջոցառումները: Շնորհանդեսի վերջում տեղեկատվություն տրամադրվեց Շրջակա միջավայրի կառավարման պլանի ձևաչափի մասին, որը պետք է կիրառվի առկա դպրոցական օբյեկտների վերականգնման համար:

Այնուհետև, մասնակիցներին հնարավորություն տրվեց ներկայացնել հարցերը և ստանալ պատասխաններ: Խորհրդակցության ընթացքում բարձրացված հիմնական հարցերը և տրված պատասխանները համառոտ ամփոփված են ստորև:

Հարց 1. Արդոք նախատեսվում է ծրագրի ընթացքում ստեղծել խելացի այգիներ:

Պատասխան. Ծրագիրը ներառված չէ, սակայն հարցը կքննարկվի:

Հարց 2. Նախատեսվում է դպրոցներում ստեղծել ապաստարաններ և հրաձգարաններ:

Պատասխան. Նախագծային փաստաթղթերում ներառված են ապաստարանները, սակայն հրաձգարանների հարցը կքննարկվի:

Հարց 3. Արդյո՞ք դպրոցի տարածքը շինարարության ընթացքում առանձնացված է ընդհանուր լանդշաֆտից:

Պատասխան. Այո, ամբողջ շինարարության ընթացքում դպրոցի ողջ տարածքը սահմանված չափորոշիչներին համապատասխան առանձնացված է լինում հարակից տարածքից:

Հարց 4. Կա՞ն պայմաններ շինարարության ընթացքում աշխատողների հանրակացարանի համար:

Պատասխան. Նախորդ ենթածրագրերի ժամանակ հանրակացարանների կարիք չի զգացվել: Եթե իրականացվելիք շինարարության ընթացքում հանրակացարանների կարիք լինի, ապա աշխատողների անվտանգության տեսանկյունից կպահպանվեն բոլոր անհրաժեշտ պայմանները:

Հանդիպումն ավատրվեց ժամը 15:10-ին:

**Լրացում I. Մասնակիցների ցանկը**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ  
 ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ  
 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

**PUBLIC CONSULTATION MEETING ON ARMENIA EDUCATION QUALITY PROJECT  
 ENVIRONMENTAL AND SOCIAL MANAGEMENT FRAMEWORK  
 ADDITIONAL FINANCING**

Երևան, 22 ապրիլ 2022

Yerevan, 22 April 2022

	<b>Անուն, Ազգանուն</b>	<b>Զբաղվածություն / Պաշտոն</b>
1	Արմինե Խաչատրյան	ԿԾԿ ԾԻԳ, Ծրագրերի ղեկավար
2	Հասմիկ Հակոբյան	ԿԾԿ ԾԻԳ, Գլխավոր հաշվապահ
3	Գրիգոր Բաղդասարյան	ԿԾԿ ԾԻԳ, Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը ենթաբաղադրիչի ղեկավար
4	Ռաֆայել Արզումանյան	ԿԾԿ ԾԻԳ, Ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները համակարգող/ճարտարագետ
5	Մանվել Սարիբեկյան	ԿԾԿ ԾԻԳ, Ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքները համակարգող/ճարտարագետ
6	Աննա Կարապետյան	ԿԾԿ ԾԻԳ, Բնապահպանական հարցերով խորհրդատու
7	Եպրաքսիա Սիմոնյան	Արտաշատի թիվ 4 ավագ դպրոցի տնօրեն
8	Մարինե Սուքիասյան	Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի տնօրեն
9	Արմեն Մարուխյան	Երևանի թիվ 139 Կ. Դեմիրճյանի անվան ավագ դպրոցի գլխ. հաշվապահ
10	Գագիկ Էմինյան	Վանաձորի թիվ 3 ավագ դպրոցի տնօրեն
11	Նորա Այվազյան	Էկոլոգ-տնտեսագետ, ՀՊՏՀ
12	Հովսեփ Գրիգորյան	ՀՀ ԿԳՄՍՆ, Գույքի կառավարման վարչություն, գլխավոր մասնագետ
13	Գորիկ Ավետիսյան	Երևանի Բնապահպանության վարչություն
14	Արփինե Մատինյան	Լոռու մարզպետարան, Կրթության, Սպորտի վարչություն
15	Արուս Թումանյան	Լոռու պարզպետարան, Գյուղտնտեսության և Բնապահպանական վարչության պետ
16	Ռուզաննա Նալբանդյան	Արագածոտնի մարզպետարան, Կրթության, Սպորտի վարչություն



**Լրացում II. Հանրային խորհրդակցության ընթացքում կատարված լուսանկարները**

